



Սուբսիդավորման և ֆինանսավորման սխեմաները
գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական
ապրանքների արտահանման խթանումը

Արտակ Ենգոյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N 18557: Հողվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Ասֆոֆոֆիտ	2
ԳթոհրլԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	3
ԳթոհրլԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	10
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	19
ԳթոհրլԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐ	30
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	50

Ամփոփում

Հետազոտությունը նվիրված է Հայաստանի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկի՝ գյուղատնտեսության ֆինանսավորման և գյուղատնտեսական ապրանքների խթանման հիմնահարցերի վերլուծությանը և համապատասխան լուծումների ներկայացմանը: Նպաստելով երկրի Համախառն ներքին արդյունքի ավելի քան 20%-ին, ապահովելով այս ոլորտում զբաղվածների շուրջ 40%-ի ընդգրկվածությունը և ունենալով արտահանման մեջ գյուղատնտեսական և դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքների ավելի քան 20% կշիռ, գյուղատնտեսությունը կարևոր դերակատարում ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Պատկերն ամբողջանում է նշվածին ավելացնելով նաև գյուղատնտեսության կարևորությունը երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից: Չնայած այս կարևորագույն դերի այս ոլորտի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը: Նշվածը վերաբերում է ոլորտի խնդիրների հիմքում ընկած թերևս կարևորագույն հարցի՝ գյուղատնտեսության ֆինանսավորմանը: Ընդ որում, գյուղատնտեսության ֆինանսավորումը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան պետական սուբսիդավորմանը և պետական մասնակցությամբ տարբեր ֆինանսավորման և վարկավորման ծրագրերի իրականացմանը, որքան մասնավոր կապիտալի ընդգրկմանը այս գործում: Հասկանալի է, որ որոլտի ֆինանսավորման պահանջակը այնպիսի ծավալների է հասնում, որ պետական միջոցները, իրենց սահմանափակ ծավալներով, չեն կարող ապահովել բավարար մակարդակ: Այս առումով, խիստ կարևոր է դառնում այնպիսի մեխանիզմների ստեղծումը, որը կապահովի մասնավոր կապիտալի առավել ակտիվ ներգրավվածությունը գյուղատնտեսության ֆինանսավորման գործում: Վերջինս կարևոր է ոչ միայն պահանջարկին համարժեք ֆինանսավորման ծավալների ապահովման տեսանկյունից, այլև՝ ֆինանսավորման պրոցեսի անընդհատության ապահովման

տեսանկյունից, ինչը չի կարող ապահովել պետական ֆինանսավորումը: Մյուս կարևոր հիմնահարցը արտահանման ոլորտում գյուղատնտեսության պոտենցիալի լիարժեք օգտագործումն է՝ նպաստելով ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ՝ երկրի, ընդհանուր առմամբ, զարգացմանը: Այստեղ նույնպես կան բազմաթիվ ապրանքներ, որոնց մասով երկիրն ունի հարաբերական առավելություններ և այդ առավելությունների լիարժեք օգտագործումը որակապես նոր մակարդակի վրա կարող է բերել ոլորտի զարգացվածությունը՝ էապես նպաստելով նաև գյուղատնտեսությունում ընդգրկված զբաղվածների զգալի մասի եկամուտների բարձրացմանը և աղքատության հաղթահարմանը: Այստեղ նույնպես, հատկապես արտահանման պոտենցիալ ունեցող արտադրությունները պետք է օգտվեն ֆինանսավորման լայն հնարավորություններից, ինչպես նպատակադրված պետական միջոցներով, այնպես էլ՝ մասնավոր կապիտալի կողմից:

Հետազոտության շրջանակներում ներկայացվելու է գյուղատնտեսության դերը Հայաստանի տնտեսության մեջ, վերլուծվելու է գյուղատնտեսության ֆինանսավորման ներկայիս մեխանիզմները, ոլորտի զարգացմանը և արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը, առկա միջազգային փորձը և դրա արդյունքում ներկայացվելու են գյուղատնտեսության ֆինանսավորման և արտահանման խթանման նոր առաջարկություններ:

Գյուղատնտեսության դերը Հայաստանի տնտեսության մեջ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Այն նաև մուլտիպլիկատիվ ազդեցություն է ունենում տնտեսության մյուս հատվածների վրա՝ հատկապես նրանց, որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում:


Կարևոր է նշել նաև, որ գյուղատնտեսության աճը նախորդեց և պայմանավորեց նաև ինդուստրիալ հեղափոխությունները, որոնք տարածվեցին XVIII դարի կեսերից Անգլիայից մինչև Ճապոնիա XIX դարի վերջում: Ոլորտի կարևորությունը մեծապես պայմանավորված է ինչպես երկրի պարենային անվտանգության ապահովման համատեքստում, այնպես էլ՝ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման մեջ մասնակցության, գյուղատնտեսության մեջ ընդգրկված բնակչության զբաղվածության ապահովման և նրանց համար պատշաճ եկամտի ապահովման տեսանկյունից: Հայաստանի համար գյուղատնտեսության կարևորությունը պայմանավորված է հիշյալ բոլոր հատկանիշներով:

Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ և, ըստ այդմ, կարող է էապես նպաստել տնտեսական հետագա աճին: Չնայած, որ գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ նվազել է 2000թ.-ից ի վեր սակայն, այնուամենայնիվ, այն կազմում է ավելի քան 20%: Մինևույն ժամանակ, այդ նույն 2000-2013թթ. ժամանակահատվածում՝ բացարձակ մեծությամբ, գյուղատնտեսական արտադրանքը, ընդհանուր առմամբ, կայուն աճ է արձանագրել, բացառությամբ՝ 2009թ. ֆինանսական ճգնաժամով պայմանավորված զգալի անկման: Գյուղատնտեսության աճը տվյալ ժամանակաշրջանում՝ տնտեսության աճի հետ մեկտեղ նպաստեց մեծապես ոչ քաղաքային բնակչության եկամուտների աճին և աղքատության մակարդակի նվազմանը¹: Ընդ որում, ֆինանսական ճգնաժամից հետո համախառն արտադրանքի աճն արձանագրվել է նոր՝ բավականին մեծ տեմպերով՝ 2013թ. աճելով նախորդ տարվա նկատմամբ ավելի քան 9%-ով և կազմելով 918,6 մլրդ. ՀՀ դրամ:

¹ Գյուղատնտեսության դերը աղքատության հաղթահարման գործում առաձևակի կարևոր է բոլոր երկրներում՝ անկախ դրանց տեսակից: Ինչպես ցույց են տալիս հաշվարկները գյուղատնտեսությունից առաջացած ՀՆԱ-ի աճը առնվազն կրկնակի արդյունավետ է աղքատության հաղթահարման գործում, քան գյուղատնտեսությունից դուրս ՀՆԱ-ի աճը (Աղբյուրը՝ World Development Report 2008, Agriculture for Development, The World Bank):

Համախառն գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը՝ շուրջ 97%, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից:


Գրաֆիկ 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը և մասնաբաժինը ՀՆԱ-ում (2000-2013թթ.)²



Ինչ վերաբերում է գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակին, ապա այստեղ նույնպես գործ ունենք բավականին մեծ ցացանիշի հետ: Մասնավորապես, 2012թ. գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը կազմել է երկրում զբաղվածների 37,3%: Այս ցուցանիշը 2003թ.-ից ի վեր որոշակի անկում է ապրել, պայմանավորված զբաղվածների թվաքանակի անկմամբ: Ըստ այդմ, մեր երկրում զբաղվածների շուրջ 40%-ի եկամուտների ձևավորման աղբյուր է հանդիսանում գյուղատնտեսությունը, որի զարգացման տեմպերից ուղղակիորեն կախված է նաև այս ոլորտում ընդգրկված անձանց կենսամակարդակի աճը:

² Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ www.armstat.am:

Քրաֆիկ 2. Գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակը և տեսակարար կշիռը (2003-2012թթ.)³



Գյուղատնտեսության դերը կարևորվում է նաև որպես արտահանման ոլորտում մեծ դերակատարություն և նաև զարգացման հեռանկար ունեցող ճյուղի: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական ապրանքները և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքը կազմում է համախառն արտահանման շուրջ 21%, ինչը բավականին մեծ ցուցանիշ է: Արտահանման կարևորագույն հոդվածները, մասնավորապես, ներկայացված են Աղյուսակ 1-ում: Դրանք են՝ ոգելից և ոչ ոգելիք խմիչքները, մրգեր և բանջարեղեն և դրանց վերամշակման արդյունքում ստացված սննդամթերք, ծխախոտ:

Աղյուսակ 1. Գյուղատնտեսական արտադրանքի և դրա վերամշակման արդյունքում ստացված ապրանքների հիմնական հոդվածները և դրանց տեսակարար կշիռը արտահանման մեջ⁴

Արտահանման հոդված	Տեսակարար կշիռը 2012թ. արտահանման մեջ
-------------------	---------------------------------------

³ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ www.armstat.am:

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ www.armstat.am:

Ոգելից և ոչ ոգելիք խմիչքներ	13,5%
Ձկնեղեն	1,5%
Մրգեր և բանջարեղեն	2%
Մրգերի, բանջարեղենի և բույսերի վերամշակման արդյունքում ստացված սննդամթերք	1,2%
Ծխախոտ	3%
Ընդամենը	21,2%

Ընդ որում, 2010-2012թթ. զգալի ավելացել են ծխախոտի արտահանման ծավալները (շուրջ 500 տոկոսով), մրգերի, բանջարեղենի և բույսերի վերամշակման արդյունքում ստացված սննդամթերք արտահանման ծավալները (շուրջ 200 տոկոսով), ձկնեղենի արտահանումը (շուրջ 280 տոկոսով), մրգերի արտահանումը (շուրջ 350 տոկոսով), ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանումը (շուրջ 80 տոկոսով), վերջինս էլ հանդիսանում է ծավալային առումով արտահանման առաջատարը նշված ցանկից՝ ավելի քան 180 մլն. ԱՄՆ դոլար 2012թ. տվյալներով: Շուկաների առումով, հիմնական շուկաներն են հանդիսանում ԱՊՀ երկրները՝ ոգելից և ոչ ոգելից խմիչքների, մրգերի, մրգերի և բանջարեղենի վերամշակումից ստացված մթերքների, ձկնեղենի համար, մինչդեռ ծխախոտը, բանջարեղենը հիմնականում արտահանվում է ոչ ԱՊՀ երկրներ:

Ծիրանը, խաղողը, բալը, դեղձը և սալորը հիմնական արտահանվող բանջարեղենների՝ կարտոֆիլի ու լոլիկի հետ մեկտեղ արտահանվող հիմնական մրգերն են: Մրգերի ու բանջարեղենի արտահանման հիմնական շուկան Ռուսաստանն է՝ 90 տոկոս: Մյուս շուկաներն են Վրաստանը, Իրաքը, Ղազախստանը, Ուկրաինան և Բելառուսը:⁵

Գյուղատնտեսությունում տնտեսական աճի հետ մեկտեղ արտահանման կառուցվածքում ավելացել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը: 2013 թվականին հանրապետությունից արտահանվել է շուրջ 64.5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որը գերազանցում է նախորդ

⁵ «Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում», Եվրոպական Միության Հարևանության ծրագիր, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ, 2012թ.:

տարվա մակարդակը 2.1 անգամ: Ծիրանի արտահանումը կազմել է 23.3 հազ. տոննա, նախորդ տարվա 12.6 հազ. տոննայի դիմաց: Աննախադեպ են եղել կարտոֆիլի արտահանման ծավալները, այն կազմել է 24.0 հազ. տոննա, նախորդ տարվա 1.1 հազ. տոննայի դիմաց⁶:

Ելնելով վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ գյուղատնտեսությունը մեր երկրում հանդիսանում է տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից մեկը: Գյուղատնտեսության զարգացումը մեր երկրում իր անմիջական ազդեցությունն է ունենում, ոչ միայն սննամթերքի արտադրության, այլև՝ այս ոլորտում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության և նրանց պատշաճ եկամուտների ապահովման և աղքատության մակարդակի նվազեցման գործում:

Չնայած արձանագրած չափավոր աճին գյուղատնտեսությունը դեռևս հանդիսանում է Հայաստանի տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի հետևողական պետական քաղաքականության: Ոլորտի մեկ այլ կարևոր բնութագրական կողմն այն է, որ գյուղատնտեսությունը ներկայացված է հիմնականում փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական շոկերից ինչպիսիք են, մասնավորապես, ապրանքի գինը, պահանջարկը, այլև՝ բնակլիմայական պայմաններից և, մեծամասամբ, նաև՝ պատշաճ պետական ֆինանսավորման և նպատակադրված սուբսիդավորման սխեմաների բացակայությունից, մատչելի վարկային միջոցների անհասանելիությունից:

Կայուն պահանջարկի բացակայությամբ և գների տատանողականությամբ պայմանավորված շուկայական ռիսկերից զատ գյուղացիական տնտեսությունները կրում են նաև բնակլիմայական անբարենպաստ պայմաններով պայմանավորված

6 ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Հասարակայնության հետ կապերի ծառայություն, <http://www.aravot.am/2014/01/30/426987/>

զգալի ռիսկեր, որոնց կառավարման և զսպման համար ամբողջ աշխարհում մեծ է պետության՝ որպես ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմներ ձևավորող և ներդնող կառույցի դերը: Հասկանալի է, որ փոքր գյուղացիական տնտեսությունների պարագայում վերոհիշյալ ռիսկերին դիմագրավելն կենսական նշանակություն է ձեռք բերում, քանի որ այդ ռիսկերը կարող են կործանարար լինել տնտեսությունների մեծամասնության համար: Շատ գյուղացիական տնտեսություններ այնքան փոքր են, որ չեն կարող սեփական միջոցներով նպաստել կամ խթանել իրենց զարգացմանը՝ հիմնվելով ներկայումս առաջարկվող ֆինանսավորման սխեմաների վրա և հաշվի առնելով շուկայական բավականին բարձր ռիսկերը արտահայտված գների և պահանջարկի տատանողականությամբ:

Գյուղատնտեսության զարգացումը շարժիչ ուժի դեր է կատարում նաև երկրի սննդի վերամշակման մի շարք ձեռնարկությունների արդյունավետ գործունեության համար, որոնցից շատերն ունեն արտահանմանն ուղղված ռազմավարություն: Հասկանալի է նաև, որ երբ խոսում ենք գյուղատնտեսության, սննդամթերք վերամշակող, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների մասին, ապա կապն այստեղ միակողմանի չէ, այլ՝ փոխադարձ: Գյուղատնտեսության մեջ անմիջականորեն ընդգրկված գյուղացիական տնտեսությունների զարգացումը մեծապես պայմանավորված է նաև վերամշակող և արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների կայուն գործունեությունից և դրանց զարգացումից: Այլ կերպ ասած, գյուղատնտեսության զարգացման համար բավարար չէ ուշադրությունը սևեռել բացառապես գործող գյուղացիական տնտեսությունների աջակցման վրա: Անհրաժեշտ է ապահովել առավել կոմպլեքս մոտեցում՝ դիտարկելով և համապատասխան մոտեցում ցուցաբերելով նաև գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկ ներկայացնող ուժերի նկատմամբ: Ոլորտի զարգացման միայն այն ռազմավարությունը, որը հաշվի է առնում ներագդող բոլոր բարևորագույն էլեմենտները կարող է ունենալ կենսագործման հաջողություն և արդյունավետություն:

Գյուղատնտեսության ներկայիս ֆինանսավորումը

Գյուղատնտեսության ֆինանսավորումը վերլուծելիս կանդրադառնանք ինչպես պետության կողմից բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը, այնպես էլ՝ ֆինանսական շուկայում բանկերի կողմից գյուղատնտեսական վարկավորմանը, այդ թվում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներին:

ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության»⁷ համաձայն գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացմանը նպաստել է պետական բյուջեից հատկացվող մի շարք ծրագրերի իրականացմանն ուղղված գումարները, որոնք ընդհանուր առմամբ 2008-2010թթ. համար հետևյալներն են.

Աղյուսակ 2. ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ֆինանսավորումը (մլն. ՀՀ դրամ)⁸

	Միջոցառման անվանումը	2008	2009	2010
1	Բույսերի պաշտպանության միջոցառումներ	300,0	300,0	150,0
2	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	1353,8	1531,4	1000,0
3	Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակով ԳԱՄԿ-ների և ԳԱՀԿ-ների ֆինանսավորում	141,5	183,1	293,1
4	Գյուղատնտեսության կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում	184,3	217,4	185,0
5	Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում	369,1	844,7	547,1
6	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին	1645,0	1602,4	558,0

⁷ Հաստատված ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1476 որոշմամբ:

⁸ «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության» հաստատված ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1476 որոշմամբ:

7	Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծրագիր	500,0	500,0	0,0
8	Տավարաբուծության զարգացման ծրագիր (Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Դրամաշնորհային աջակցություն սակավ ապահով ֆերմերներին» ծրագրի շրջանակներում)	0,0	0,0	345,0
9	Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր	105,1	188,2	76,6
10	Անտառպահպանական անտառպաշտպանական, անտառվերականգման աշխատանքների իրականացում	1465,5	1465,5	765,5
11	Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող անտառվերականգման միջոցառումներ	400,0	300,0	0,0
Ընդամենը		6464,3	7132,7	3920,3
Այլ ծրագրեր		2275,6	1925,6	1874,8
Վարկային միջոցներ		589,5	4408,4	3387,3
Ամբողջը		9329,4	13466,7	9182,4

Ինչպես տեսնում ենք բյուջեից ֆինանսավորվող միջոցները հիմնականում ուղղված են այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են, մասնավորապես, բույսերի պաշտպանություն, կենդանիների պատվաստում, հողատեսքերի պահպանություն և բարելավում, անտառպահպանական աշխատանքների իրականացում և այլն, որոնք, ըստ էության, ավելի շատ իրավիճակի պահպանման խնդիրներ են լուծում և ոչ թե զարգացման՝ ուղղված բազմաթիվ նոր ծրագրերի իրականացմանը, որոնք երկարաժամկետ ազդեցություն կունենան գյուղատնտեսության զարգացման համար: Մյուս կողմից, ակնհայտ է, որ այդ միջոցները խիստ սահմանափակ են, փոփոխական և ոչ միշտ են աճի միտում դրսևորում: Այսպես, 2010թ. ֆինանսավորումը պետական բյուջեից նվազել է գրեթե կիսով չափ: Նման ցածր ցուցանիշ է գրանցվել նաև 2011թ., որից հետո միայն 2012թ. ցուցանիշներով աճել⁹:

⁹ «Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում», Եվրոպական Միության Հարևանության ծրագիր, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ, 2012թ.:


Պետական ֆինանսական միջոցների սղության, ոչ կայուն և նպատակային ֆինանսավորման արդյունքում դժվար է դառնում խոսել գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ֆինանսավորման հստակ և նպատակաուղղված քաղաքականության մասին: Մի կողմից առկա սահմանափակ պետական միջոցները պետք է օգտագործվեն առավել արդյունավետ և թիրախավորված՝ կողմնորոշված դեպի զարգացում ապահովող երկարաժամկետ ծրագրերի իրականացումը, մյուս կողմից՝ պետական քաղաքականությունը գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում պետք է ուղղվի մասնավոր կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, որոնք ֆինանսական շուկայի և շուկայական մեխանիզմների միջոցով կուղղորդվեն դեպի գյուղատնտեսության ֆինանսավորումը:

Այժմ անդրադառնանք ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ գյուղատնտեսության ֆինանսավորմանը՝ վերլուծելով և համապատասխան գնահատականներ տալով վարկավորման առանձնահատկություններին և պայմաններին ներառյալ՝ վարկավորման ծավալները, տոկոսադրույքները, արժույթը և այլն: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության ֆինանսավորումը Հայաստանում հիմնականում կատարվում է բանկային համակարգի միջոցով: Բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորումն իրականացվում է ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ՝ տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների և պետական ծրագրերի շրջանակներում պետության կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսների միջոցով:

Այսպես, 2000-2004թթ., բացառությամբ 2001թ.-ի, առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները գրեթե միևնույն մակարդակի վրա են գտնվել կազմելով 7-8 մլրդ. ՀՀ դրամ: 2005թ. սկսած այդ ծավալները կտրուկ աճ են արձանագրել 2013թ. հասնելով շուրջ 100մլրդ. ՀՀ դրամի: Այս աճը պայմանավորված էր, մասնավորապես, 2005-2008թթ. արձանագրված բարձր տնտեսական աճի

ցուցանիշներով, բանկային համակարգի բուռն զարգացմամբ և ակտիվների աճով: Նույնիսկ ֆինանսական ճգնաժամի և դրան հաջորդող տարիներին վարկավորման ծավալների աճ է գրանցվել, որը պայմանավորված էր նաև ճգնաժամի հաղթահարման շրջանակներում պետական զգալի միջոցների ուղղորդմանը դեպի գյուղատնտեսության վարկավորումը:


Գրաֆիկ 3. Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները (2000-2013թթ.)¹⁰



Ինչպես և կանխատեսվում էր գյուղատնտեսության վարկավորման ծավալների աճն իր ուղղակի ազդեցությունն է ունենում գյուղատնտեսական արտադրանքի ծավալի աճի վրա: 2009թ.-ից սկսած նկատվում է ինչպես վարկավորման ծավալների աճ, այնպես էլ՝ համախառն արտադրանքի: Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ի թիվս այլ գործոնների, բավականին զգայուն է ֆինանսավորման նկատմամբ և մատչելի պայմաններով ֆինանսավորման հասանելիությունը կարող է էապես նպաստել գյուղատնտեսության հետագա աճին:

¹⁰ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am:


Գրաֆիկ 4. Գյուղատնտեսության վարկավորման ծավալները և համախառն արտադրանքը (2000-2013թթ.)¹¹



Այնուամենայնիվ, խիստ կարևոր է նաև վարկային ռեսուրսների տրամադրման պայմանները, որոնցով տեղաբաշխվում են այդ միջոցները գյուղացիական տնտեսություններին: Ուշագրավ է, որ 2000-2013թթ. ողջ ժամանակահատվածի համար առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորումն ավելի շատ կատարվել է արտարժույթով, քան ՀՀ դրամով: Ընդ որում, արտարժույթային և դրամային վարկերի միջև խզումը էապես հատկապես մեծացել է 2008թ. սկսած և շարունակվում է պահպանվել մինչև օրս: Հիմնական պատճառն այստեղ ազգային արժույթի զգալի արժեզրկումն է, մյուս կողմից էլ՝ արտարժույթով և, մասնավորապես, ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքների համեմատաբար ավելի մատչելի լինելն է:

Գրաֆիկ 5. Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները՝ ըստ արժույթի (2000-2013թթ.)

¹¹ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am:



Գյուղացիական մանր տնտեսությունների համար, որոնք եկամտի աղբյուրը ՀՀ դրամով է սա նշանակում է արտարժույթային ռիսկի ստանձնում, որն էլ կարող է բերել անվճարունակության և կործանարար ազդեցություն ունենալ պայմանավորված արժույթային փոխարժեքի տատանմամբ և, մասնավորապես, ՀՀ դրամի արժեզրկմամբ: Վերջինս բավականին զգալի մեծությամբ շուրջ 20% արձանագրվեց 2009թ. սկզբին՝ շարունակելով ազգային արժույթի փոխարժեքի արժեզրկումը նաև հետագա տարիներին, ընդհանուր առմամբ, հասնելով 2008թ. վերջի համեմատ ավելի քան 30%: Հասկանալի է, որ հատկապես միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի դեպքում փոխարժեքի հնարավոր արժեզրկումը շատ ծանր դրության մեջ կարող է դնել դրամային եկամտաբերությամբ առանձնացող և բազմաթիվ այլ ռիսկերի հետ բախվող գյուղացիական տնտեսություններին: Ուստի, արտարժույթով վարկերի լայն տարածումը գյուղատնտեսական վարկավորման ոլորտում ֆինանսական շուկայի միջոցով ֆինանսավորման խնդիրներից մեկն է, որը կարիք ունի վերանայման և ճշգրտման:

Հարկ է նշել նաև, որ պետական միջոցներով գյուղատնտեսության վարկավորման ծրագրերի շրջանակներում, որպես վարկի պարտադիր պայման հանդիսանում է ՀՀ դրամով վարկի տրամադրումը: Աղյուսակ 3-ում ներկայացված է ՀՀ կառավարության, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների ռեսուրսներով տրամադրված գյուղատնտեսական վարկերի ընդհանուր քանակը և ծավալը առ 31.12.2013թ.: Ինչպես տեսնում ենք, ՀՀ կառավարության միջոցներով ֆինանսավորված ընդհանուր վարկային պորտֆելի միայն 21,3% է ուղղվել գյուղատնտեսությանը, իսկ KfW և Համաշխարհային բանկի միջոցներից համապատասխանաբար՝ 18,7% և 20,6%: Եթե համեմատենք ընդհանուր բանկային հատվածի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալների հետ, ապա ՀՀ կառավարության միջոցներից ֆինանսավորումը կազմում է ընդամենը 1,3%, ինչը կրկին խոսում է պետության կողմից հատկացվող ֆինանսական ռեսուրսների խիստ սահմանափակ լինելու մասին: Այս պարագայում կարևոր է մի կողմից այդ միջոցների խիստ արդյունավետ և նպատակային օգտագործումը, որը կունենա երկարաժամկետ զարգացման ուղղվածություն, մյուս կողմից՝ առաջնահերթ է դառնում գյուղատնտեսության ֆինանսավորման մեջ ֆինանսական շուկայի միջոցով վերաբաշխվող մասնավոր կապիտալի ուղղորդման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակումը և ներդրումը:

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները առ 31.12.2013¹²


Ֆինանսավորող	Վարկերի քանակ			Վարկերի ծավալ		
	Գյուղատնտեսություն	Ընդամենը (ՀՀ դրամ)	Կշիռը	Գյուղատնտեսություն	Ընդամենը (ՀՀ դրամ)	Կշիռը
ՀՀ կառավարություն	2,009	2,983	67.3%	1,268,335,759	5,948,957,833	21.3%
KfW	3,690	7,711	47.9%	3,770,831,825	20,192,470,252	18.7%
Համաշխարհային բանկ	2,568	5,626	45.6%	4,269,096,611	20,754,207,085	20.6%

Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման տոկոսադրույքների վերլուծությունը ցույն է տալիս, որ ՀՀ դրամով վարկերի

¹² Աղբյուրը՝ Գերմանա-հայկական հիմնադրամի պաշտոնական կայք՝ www.gaf.am:


տոկոսադրույքները գերազանցում են արտարժույթով վարկերի տոկոսադրույքներին, ընդ որում, ՀՀ դրամով և արտարժույթով վարկերի տոկոսադրույքների միջև տարբերությունը հատկապես մեծանում է 2009թ.-ից սկսած՝ պայմանավորված միջազգային շուկայում ԱՄՆ դոլարով փոխառությունների ցածր տոկոսադրույքների հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս տեղական բանկերին համեմատաբար ավելի ցածր տոկոսադրույքով առաջարկել ԱՄՆ դոլարով վարկերը տեղական շուկայում: Ասվածը վերաբերում է ինչպես կարճաժամկետ վարկերին՝ 181 օրից մինչև 1 տարի ժամկետայնությամբ, այնպես էլ՝ երկարաժամկետ՝ 1 տարուց ավել վարկերին: Տոկոսադրույքի տարբերությունները ՀՀ դրամով և արտարժույթով վարկերի համար հատկապես վերջին տարիներին հասնում են 5-7%, ինչը բավականին զգալի է և կարող է էական դեր խաղալ գյուղացիական տնտեսությունների կողմից վարկի արժույթի ընտրության ժամանակ: Ստեղծված իրավիճակում արտարժույթով վարկերի տոկոսային մատչելիությունը և «գրավչությունը» իրականում կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ դրամային եկամուտներ ունեցող մանր տնտեսությունների համար՝ պայմանավորված արտարժույթային ռիսկով, որը կարող է լիովին հավասարակշռել տոկոսադրույքների տարբերությունը և ավելին մեծ վնասների աղբյուր դառնալ:

Գրաֆիկ 6. ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի միջին կշռված տոկոսադրույքները՝ ըստ ժամկետայնության (2000-2013թթ.)



Համադրելով ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով միջին կշռված տոկոսադրույքների զարգացումները այդ նույն ժամանակահատվածում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկավորման ծավալների հետ բացատրելի է դառնում 2008-2009թթ. սկսած ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի ծավալների միջև զգալի խզվածքը ի օգուտ արտարժույթային վարկերի: Ակնհատ է, որ գնային գրավչությունը ի դեմս ցածր տոկոսադրույքի ունենում է իր ազդեցությունը և որևէ խոչընդոտ չկա արտարժույթային վարկերի ծավալի աճի համար, հատկապես այն պարագայում, երբ առևտրային բանկերի ավանդային բազայի զգալի մասը կազմում են հենց արտարժույթային ավանդները և, ստեղծված իրավիճակում, չնայած ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքի և ակնկալվող մարժայի համեմատաբար ավելի բարձր մակարդակի, բանկերն առավել հակված են տեղաբաշխելու վարկերը հենց արտարժույթով՝ արտարժույթային ռիսկից խուսափելու համար:

Գրաֆիկ 7. ՀՀ դրամով և արտարժույթով վարկերի միջին տոկոսադրույքները և գյուղատնտեսության վարկավորման ծավալները (2000-2013թթ.)



Ֆինանսական կրթվածության ցածր մակարդակի պայմաններում, որը խնդիր է ոչ միայն գյուղացիական տնտեսությունների պարագայում, այլև, ընդհանուր առմամբ, երկրում, շատերը լիարժեք վերլուծության չեն ենթարկում բոլոր հավանական ռիսկերը և, մասնավորապես, արտարժույթային ռիսկը, որի անտեսման արդյունքում հայտնում են անելանելի խնդիրների առջև՝ ստիպված լինելով ոչ թե զարգացնել իրենց տնտեսությունները, այլև՝ դադարեցնել դրանց գործունեությունն ընդհանրապես:

Պետական քաղաքականության վերլուծություն

Անդրադառնալով Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությանը, ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ այն ամրագրված է երեք հիմնական փաստաթղթերով, որոնք են.

- «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն»՝ հաստատված ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1476 որոշմամբ (այսուհետ նաև՝ Չարգացման ռազմավարություն):

- «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»՝ հաստատված ՀՀ կառավարության 15.12.2011թ. թիվ 49 որոշմամբ:
- «Կայուն զարգացման ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ:

Զարգացման ռազմավարությամբ սահմանված է նպատակների 17 խումբ, որոնք, վերաբերում են, մասնավորապես, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը և հակաճգնաժամային մեխանիզմների ներդրմանը, ագրարային բարեփոխումների խորացմանը և գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական հումքի վերամշակմանը, գյուղատնտեսական ռիսկերի մեղմացմանը, գյուղատնտեսության վարկավորմանը և այլն:

Ոլորտի զարգացման արգելքների և խոչընդոտների մասին խոսելիս, Զարգացման ռազմավարությունը նշում է հստակորեն, որ գյուղատնտեսության վարկավորումը դեռևս մնում է ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը՝ չբավարարելով գյուղատնտեսությունում տնտեսվարողների առկա պահանջարկը և, միաժամանակ, առաջարկելով վարկավորման ոչ մատչելի պայմաններ՝ ի թիվս գրավի առարկայի, վարկավորման ժամկետների և տոկոսադրույքի, և այլն, որը դժվարամատչելի են դարձնում այն գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար:

Այս տեսանկյունից, ագրարային ոլորտի վարկավորման բարելավման շրջանակներում, ըստ Զարգացման ռազմավարության, կարևորվում է գրավադրման մեխանիզմների վերանայումը, մասնավորապես, գրավի առարկայի շրջանակի

ընդլայնումը, մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումը, պետական երաշխիքների տրամադրումը: Մեկ այլ կարևոր ուղղություն է գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության առավել հասցեագրված նպատակային վարկավորումը: Վարկերի մատչելիության բարձրացման նպատակով պետք է իրականացվեն վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման տարբեր ծրագրեր, որոնք կնպատակաուղղվեն ոլորտում նպատակային քաղաքականության իրականացմանը:

Ինչպես տեսնում ենք, Ջարգացման ռազմավարությամբ սահմանված դրույթները գյուղատնտեսության վարկավորման ուղղությամբ շատ ընդհանրական են և չեն մանրամասնեցվում միջոցառումների մակարդակով: Չնայած նշված որպես թիրախ ընդունված գյուղատնտեսությունում վարկավորման ծավալների ավելացմանը մինչև 2020թ.՝ ճյուղի համախառն ներքին արդյունքի 14-17%՝ 2008թ. 2.4% փոխարեն¹³, ռազմավարության մեջ բացակայում են ամրագրված դրույթների կատարումն ապահովող մանրամասն միջոցառումները: Մինչդեռ այս կարևորագույն խնդիրը պետք է բավականին մանրամասն վերլուծության ենթարկվի և արդյունքում մշակվեն համապատասխան միջոցառումների խումբ, որոնք քայլ առ քայլ կմոտեցնեն վերոհիշյալ խնդիրների լուծմանը կապված ինչպես տոկոսադրույքների և գրավադրման պայմանների, այնպես էլ՝ վարկավորման արժույթի և վարկերի ժամկետայնության հետ: Ընդ որում, վարկավորման պայմանների մատչելիության ապահովումը, ինչպես նշված է ռազմավարության մեջ բավականին բարդ և համակարգային լուծումներ պահանջող խնդիր է, որը կարող է իրականանալ, ի թիվս այլ միջոցառումների, ոլորտին հատկանշական ռիսկերի զսպման և դրանց պատշաճ կառավարման մեխանիզմների մշակման և ներդրման արդյունքում: Կարևորելով պետական միջոցների նպատակային օգտագործումը և սուբսիդավորման տարբեր

¹³ «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության»՝ հաստատված ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1476 որոշմամբ:

ծրագրերի իրականացումը, այնուամենայնիվ, պետք է հստակ գիտակցել նաև, որ այդ միջոցները ուղղվող թե՛ վարկավորմանն և թե՛ սուբսիդավորմանը բավարար չեն կարող լինել ոլորտի առջև ծառայած ֆինանսավորման խնդրի լուծման համար: Անհրաժեշտ են այլ լուծումներ, որոնք ոչ այնքան պետական միջոցներին են վերաբերում, որքան ֆինանսական շուկայում այնպիսի բարեփոխումների իրականացմանը, որոնք թույլ կտան ավելի հասու դարձնել բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից միջնորդավորված մասնավոր կապիտալը գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող սուբյեկտների համար: Սրան կարելի է հասնել ոլորտին հատկանշական ռիսկերի կառավարման և զսպման համապատասխան մեխանիզմների ներդրման միջոցով, որոնք թույլ կտան նաև մեղմացնել վարկավորման այն պայմանները, որոնք ներկայումս գործում են այս ոլորտում և դրանով հանդերձ մեծացնել վարկավորման ծավալները բավարարելու առկա մեծ պահանջարկը, որը պետական սահմանափակ միջոցներով անհրար է բավարարել և նույնիսկ աննպատակահարմար: Պետք է գործեն վարկավորման շուկայական մեխանիզմներ, որտեղ գյուղատնտեսության վարկավորումը կիրականացվի երկուստեք շահավետ պայմաններով՝ թե՛ ֆինանսական կազմակերպությունների համար և թե՛ գյուղացիական տնտեսությունների և այն ծավալով, որը թույլ կտա զարգացնել համապատասխան պոտենցիալ ունեցող գյուղատնտեսության բոլոր ուղղությունները և ակտիվացնելով հատկապես մանր տնտեսությունները, որոնք ոլորտի հիմնական մասն են կազմում:

Մյուս կարևորագույն խնդիրը, որին անդրադարձ է կատարվում Զարգացման ռազմավարության մեջ դա ապահովագրության հարցն է: Գյուղատնտեսությունը, որպես ռիսկային ոլորտ, զգալի կորուստներ է կարող է կրել տարբեր բնական աղետներից, ուստի կարևոր խնդիր է դառնում ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացումը և ապահովագրական համակարգի ներդրումը: Չնայած գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի գործունեության

կարևորության հիշատակման, Ռազմավարությունը կրկին չի մանրամասնում ձեռնարկվելիք միջոցառումները համակարգի աստիճանական ներդրման համար: Հիմնական շեշտն այստեղ դրվում է հակակարկտային տեղակայանքների կիրառման և ռադիոլոկացիոն ցանցի ներդրման, հեղեղավտանգ տարածքներում հակահեղեղային միջոցառումների և հողերի էռոզիայի դեմ պայքարի իրականացման վրա: Մինչդեռ, գործուն ապահովագրական համակարգի ներդրումը ենթադրում է այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք թույլ կտան գյուղացիական տնտեսություններին ստանալ լրիվ կամ մասնակի փոխհատուցում բնակլիմայական պայմաններով պայմանավորված արտադրական վնասների: Ընդ որում, ապահովագրական սխեման կարող է երաշխավորել նաև հստակություն և կանխատեսելիություն բարեհաջող բերքի դեպքում գների մակարդակի և պահանջարկի մեծության մասով, որոնք խիստ կարևոր են արտադրության կազմակերպման և ներդրումների իրականացման համար: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է վերամշակող և արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների դերը, որոնք հանդիսանում են գյուղատնտեսության շարժիչ ուժը:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի պետական աջակցության ուղղություններն են.


- արտաքին առևտրի ռազմավարության հստակացում, տրանսպորտային ուղիների շրջափակման վերացման հետևողական քայլերի ձեռնարկում,
- աջակցություն հումք արտադրողների և վերամշակողների միջև կոոպերացիայի ձևավորմանը,
- աջակցություն շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծմանը,
- վերամշակող արդյունաբերության, հատկապես՝ գինիների, մուրաբաների, ջեմերի, կոնֆիտյուրների, օշարակների, չրերի, համեմունքների, ազգային

աղանդերների արտադրության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարատիրության զարգացման խթանում,

- աջակցություն վերամշակող կազմակերպությունների և արտադրողների միջև պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացին:

Գյուղատնտեսական արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացումը հանդիսանում է Զարգացման ռազմավարության մեկ այլ կարևորագույն բաղկացուցիչը: Սահմանափակ ռեսուրսների պայմաններում առաջավոր տեխնոլոգիաների օգտագործումն անխուսափելի է արտադրողականության բարձրացման համար: Սակայն ՀՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկայի քանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ աճը 2006-2013թթ. ընթացքում գրեթե բացակայում է: Նշվածը վերաբերում է ոչ միայն մեկ կամ մի քանի տեխնիկաների այլ մի ամբողջ խմբի՝ տրակտորների և բեռնատարների որոշակի բառացությամբ:

Գրաֆիկ 8. ՀՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ ըստ առանձին տեսակների (2006-2013թթ.)



Տեխնիկական վերազինման և գյուղացիական տնտեսությունների կողմից դրանց առավել ինտենսիվ օգտագործման խոչընդոտող գործոններից մեկը կրկին համապատասխան վարկային միջոցների անհասանելիությունն է մանր գյուղացիական տնտեսությունների համար: Մյուս կողմից, Հայաստանի գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի պայմաններում տեխնոլոգիաների կիրառությունը լուրջ դժվարությունների է հանդիպում: Այսպիսով, մի կողմից գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարությունը, ծայրաստիճան բարձր մաշվածությունը և, մյուս կողմից, փոքր տնտեսություններում դրանց ոչ արդյունավետ շահագործումը խոչընդոտներ է ստեղծում ճյուղի ինտենսիվության մակարդակի բարձրացման համար: Գյուղատնտեսության տեխնիկական միջոցներով համալրումը հանդիսանում է նաև ներկայիս առաջնահերթ խնդիրներից մեկը, որը ներառված է «ՀՀ գյուղատնտեսության 2014-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարության նախագծի» մեջ¹⁴:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ռազմավարությանը, ապա գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացումը և կառուցվածքի բարելավումը՝ շնորհիվ արտահանվող ապրանքների տեսականու դիվերսիֆիկացման, դիտվում է որպես ռազմավարական կարևորություն ներկայացնող հիմնախնդիր:

Խնդիրն առավել արդիական է դառնում, երբ հաշվի ենք առնում նաև գյուղմթերքների իրացման դժվարությունները, որը, մասամբ, պայմանավորված է նաև տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ, դրանց ձևավորման դանդաղ ընթացքով:

¹⁴ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Հասարակայնության հետ կապերի ծառայություն:

Վարկավորման գործուն և գրավիչ մեխանիզմների ստեղծումը կարևոր է նաև արտահանման ուղղվածություն ունեցող արտադրատեսակների արտադրության և արտահանման խթանման համար: Այն, մասնավորապես, վերաբերում է թարմ մրգերի որոշ տեսակներին, օրգանական արտադրանքին, մսամթերքների և կաթնամթերքների որոշ տեսակներին, պտուղ-բանջարեղենի պահածոներին և այլն:

Արտահանման խնդիրն, առանձին երկրների դեպքում, հատկապես բարդանում է նրանով, որ ներմուծողները հաճախ պահանջում են հիվանդությունների բացակայության երաշխիքներ և, երաշխիքներ, որ գործում են հիգիենայի կանոնները արտադրության և մատակարարման փուլերում, կամ որ անասնաբուժական դեղերի մնացորդները և շրջակա միջավայրի աղտոտիչները սննդամթերքում չեն գերազանցում թույլատրելի չափերը: Ըստ այդմ, արտահանման իրավիճակի բարելավման տարբերակներից մեկը կարող է լինել հայկական սփյուռքի և օրգանական սննդամթերքի շուկաներ ապրանքներ արտահանելը: Միջազգային շուկաներ մուտք գործելու մեկ այլ տարբերակ է՝ Հայաստանում սննդամթերքի անվտանգության և որակի բարելավումը:

Արտահանումը Հայաստանում բնորոշվում է սահմանափակ անվանացանկով: Երեք հիմնական արտադրանքների (մետաղներ, ակոհոլային խմիչքներ և ադամանդ) խումբն ապահովում է արտահանման 70%-ից ավելին, որի տեսակարար կշիռն աճի միտում ունի: Մնացած արտահանող ոլորտներն իրենց արտահանման ծավալներով չեն գերազանցում տարեկան 15 մլն ԱՄՆ դոլ. մակարդակը¹⁵:

Անդրադառնալով ՀՀ կառավարության կողմից 2008թ. հաստատված «Կայուն զարգացման ծրագրին», նշենք, որ, ընդհանուր առմամբ, Կայուն զարգացման ծրագիրը առաջ է քաշում գյուղատնտեսության կարևորության և դրա զարգացման վերաբերյալ

¹⁵ ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն հաստատված ՀՀ կառավարության 15.12.2011թ. թիվ 49 որոշմամբ:

այն նույն մտահոգությունները և խնդիրները, որոնք հետագայում ամրագրվել են նաև Ռազմավարության մեջ: Մասնավորապես, Ծրագիրը դիտարկում է ագրարային ոլորտը պետական ծախսային գերակայությունների շարքում, կարևորում ֆինանսական մատչելիության ավելացման և բանկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնումը, ռիսկերի ապահովագրման համակարգի ստեղծման հրատապությունը, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ոլորտի զարգացման անհրաժեշտությունը և այլն: Որպես գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման մեծ մարտահրավեր է հանդիսանում գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը, որի բարձրացման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերում կարևորվում է առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը ինչպես գյուղատնտեսական մթերքների արտադրության, այնպես էլ՝ դրանց հետագա վերամշակման փուլերում:

Գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման գործում որոշիչ դեր պետք է խաղան ֆինանսական միջնորդության ծավալների կտրուկ աճը: 2021թ. նախատեսվում է վարկավորման ծավալները հասցնել գյուղատնտեսության համախառն արտադրանքի 18%-ի, 2006թ. 3%-ի փոխարեն¹⁶: Նշենք, որ 2012-2013թթ. գյուղատնտեսության վարկավորման ծավալները հասնում են գյուղատնտեսության համախառն արտադրանքի 10-11%, ընդ որում, արտարժույթով վարկերի ծավալը կազմում է վարկերի ճնշիչ մեծամասնությունը՝ մոտ 7%: Կայուն զարգացման ծրագիրը սահմանում է գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4. Գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները 2006-2021թթ.¹⁶

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
Ընդհանուր				
Ավելացված արժեքը, մլրդ դրամ՝ ընթացիկ գներով	495	697	982	1379
%՝ ՀՆԱ նկատմամբ	18.7	14.8	12.5	10.5

¹⁶ Աղբյուրը՝ «Կայուն զարգացման ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ:

Արտահանումը և ներմուծումը				
Գյուղատնտեսական ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար	26.8	56.8	177.3	498.5
Տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ, %	2.67	3.5	4.1	4.8
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	2.32	2.6	5.9	11.8
Գյուղատնտեսական ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	179.3	386.1	506.1	542.5
Տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ, %	8.17	7.5	5.2	3.0
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	15.5	16.8	15.7	12.0
Գյուղացիական տնտեսություններ				
Տնտեսությունների քանակը, հազ.	339.2	330.8	320.4	307.9
Տեսակարար կշիռը գյուղատնտեսության արտադրանքի մեջ, %	97.6	95.2	92.2	88.6
Վարկավորման ցուցանիշներ				
Վարկեր գյուղատնտեսությանը, %՝ գյուղատնտեսական ավելացված արժեքի նկատմամբ	2.97	6	11	18
Վարկեր գյուղատնտեսությանը, մլրդ դրամ՝ ընթացիկ գներով	14.2	41.8	108.1	248.2

2010թ.-ի համար արդեն իսկ առանձին ցուցանիշներ էապես տարբերվում են կատարված կանխատեսումներից: Մասնավորապես, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 636,7 մլրդ. ՀՀ դրամ 697մլրդ. ՀՀ դրամի փոխարեն կազմելով ՀՆԱ-ի շուրջ 18%-ը: 2015թ.-ի կանխատեսումները համախառն գյուղատնտեսական արտադրանքի բավականին հուսադրող են, եթե հաշվի առնենք, որ 2013թ.-ի տվյալներով այն արդեն իսկ կազմել է մոտ 918 մլրդ. ՀՀ դրամ: Նույնը կարող ենք ասել վարավորման ծավալների մասին, որոնք թեպետ թվային ցուցանիշների առումով կարող են հասանելի լինել, սակայն վարկերի պայմանների տեսանկյունից բազմաթիվ մտահոգությունների տեղիք են տալիս:

Ինչպես տեսնում ենք ռազմավարական նշանակության վերոհիշյալ փաստաթղթերը, գյուղատնտեսության ֆինանսավորման մասով, պարունակում են ընդհանրական դրույթներ, որոնք հիմնականում արտահայտում են այն բոլոր մոտեցումները, որոնք նախկինում նույնպես այս կամ այն չափով կիրառվել են: Ասվածը վերաբերում է սուբսիդավորմանը, պետական միջոցներից վարկավորմանը, երաշխիքների

տրամադրմանը: Խոսելով ապահովագրական համակարգի ներդրման կարևորության մասին փաստաթղթերն այնուամենայնիվ չեն պարունակում որևէ մոդելային նկարագրություն և, առավել ևս կոնկրետ ժամանակացույց ձեռնարկվող միջոցառումների իրենց պատասխանատուներով, որը հնարավոր կդարձներ համակարգի աստիճանական ներդրումը: Ուշագրավ է նաև, որ նկատելի չէ գյուղատնտեսության զարգացման ոլորտում կարևոր դերակատարություն ունեցող պետական տարբեր մարմինների համագործակցության մասին խոսող որևէ դրույթ: Օրինակ, նկատելի է, որ Ջարգացման ռազմավարությունը մշակված լինելով Գյուղատնտեսության նախարարության կողմից չի ներառում դրույթներ ֆինանսավորման նոր սխեմաների ներդրման, ընդհանրապես, ֆինանսավորման մոդելի, գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտ մասնավոր կապիտալի ուղղորդման, ապահովագրական համակարգի մոդելի վերաբերյալ որևէ դրույթ, որը պետք է մշակվեր պետական պատասխանատու այլ գերատեսչությունների՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որոնք և պետք է հանդիսանային նաև այդ նոր մոդելների ներդրման համար գլխավոր պատասխանատուները: Ակնհայտ է, որ այս ոլորտը Գյուղատնտեսության նախարարության անմիջական իրավասություններից դուրս է գալիս, սակայն Գյուղատնտեսության նախարարությունը պետք է հանդիսանա այստեղ թերևս հիմնական նախաձեռնողը և շահագրգիռ կողմը և սերտորեն համագործակցի ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ ոլորտի ֆինանսավորման ծանր խնդրի լուծման ուղղությամբ, որն այդքան կարևորվում է գյուղատնտեսության զարգացման գործում:

Հարկ է նշել նաև, որ պետական քաղաքականությունը, ինչպես ամրագրված է Ջարգացման ռազմավարության մեջ, նույնիսկ 10 տարվա երկարաժամկետ ժամանակահատվածի համար գյուղատնտեսության ֆինանսավորման խնդիրը տեսնում է պետական միջոցներով ֆինանսավորման կոնտեքստում՝ ցածր

տոկոսադրույքներով վարկավորման կամ սուբսիդավորման միջոցով: Ընդ որում, այն պարագայում, երբ նույն ռազմավարական նշանակության փաստաթղթերում բազմիցս նշվում է, որ պետական ֆինանսավորումը երբեք բավարար չի եղել ոլորտի պահանջարկը բավարարելու համար: Մյուղ կողմից, ինչպես տեսանք, պետական ֆինանսավորումը նաև չի առանձնանում իր կայունությամբ և բավականին փոփոխական կարող է լինել՝ ըստ առանձին տարիների: Այս պարագայում ակնհայտ է, որ միջոցներ պետք է ձեռնարկվեն մասնավոր կապիտալը՝ ֆինանսական շուկայի միջոցով, դեպի գյուղատնտեսության ֆինանսավորում ուղղորդելու համար, որը թույլ կտա լուծել միջոցների սղության, անկայուն ֆինանսավորման խնդիրները և, միաժամանակ, հնարավորություն կտա պետական սահմանափակ միջոցներն ուղղորդել դեպի նպատակային ծրագրերի իրականացումը, իսկ երկարաժամկետ ժամանակահատվածում նույնիսկ կրճատել գյուղատնտեսության ֆինանսավորմանը հատկացվող պետական միջոցները՝ ուղղորդելով դրանք սոցիալական և այլ ծրագրերի իրականացմանը: Այս ուղղությամբ պետական հետևողական քաղաքականությունը ենթադրում է գյուղատնտեսության ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ստեղծում, ոլորտին հատկանշական ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում և միջոցառումներ, որոնք աստիճանաբար կտանեն մասնավոր ֆինանսավորման մոդելի ներդրմանը Հայաստանում: Պետական այս քաղաքականության և իրականացվելիք միջոցառումների մասին ենք խոսելու հետագոտության մյուս գլխում:

Գյուղատնտեսության ֆինանսավորման նոր մոտեցումներ

Գյուղատնտեսության ֆինանսավորումը ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցների, մասնավորապես, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտին հատկանշական ռիսկերով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ֆինանսավորման համար ֆինանսական շուկայի առավել

ակտիվ ներգրավումը պահանջում է մի շարք կարևորագույն միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են ոլորտին հատկանշական ռիսկերի նվազեցմանը և հնարավոր խոչընդոտների վերացմանը: Որպես գյուղատնտեսության վարկավորման հատկանշական ռիսկեր կարելի առանձնացնել հետևյալ հիմնականները¹⁷.

- **Սպասարկման ծախսերը**՝ գյուղատնտեսության վարկավորումը հատկապես քիչ բնակեցված վայրերում ենթադրում է տրանզակցիոն ավելի բարձր ծախսեր պայմանավորված վարկառուների հեռավորությամբ, բնակչության ցածր խթության մակարդակով, ենթակառուցվածքների թույլ զարգացվածությամբ:
- **Սեզոնայնությունը և մարումները**՝ գյուղատնտեսության ապրանքների արտադրության սեզոնայնությունը, ներդրումների իրականացման և եկամուտների ստացման ժամանակային լագերը ենթադրում են, որ վարկերը ենթակա են մարման մեծ մասնաբաժիններով կամ ամբողջությամբ (Bullet repayment) և ոչ թե պարբերական մարումների միջոցով:
- **Բիզնեսի բարդությունը**՝ տարբեր տեսակի գյուղատնտեսական ապրանքների արտադրության առանձնահատկությունները բարդացնում են բիզնեսի գնահատումը և պահանջում յուրահատուկ գիտելիքներ:
- **Արտադրական ռիսկերը**՝ բնակլիմայական պայմանների անմիջական ազդեցությունն ապրանքների արտադրության վրա, մեծացնում են արտադրական ռիսկերը՝ հաշվի առնելով նաև դրանց անկանխատեսելիությունը:
- **Շուկայական և գնային ռիսկերը**՝ պայմանավորված ինչպես իրացման շուկաների առանձնահատկություններով, այնպես էլ՝ արտադրական ռիսկերով գյուղատնտեսական արտադրանքի դեպքում առկա են գնային և իրացման ռիսկեր, ինչը ենթադրում է, որ հնարավոր չի լինի իրացնել ողջ արտադրության ծավալը կամ այդ իրացումը կարող է կատարվել ցածր գնով:

¹⁷ How to Make Agri-finance Benefit Rural People in Emerging Markets”, International Finance Corporation, September 14, 2010.

- **Ապահովվածությունը՝** վարկային պարտավորության ապահովվածության տեսանկյունից գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, անասունները և նմանատիպ այլ անշարժ և շարժական գույքը հանդիսանում է բավականին ռիսկային: Գյուղատնտեսության վարկավորման պարագայում ապահովության միջոցները որպես կանոն կամ բացակայում են կամ ոչ գրավիչ են:

Վերոհիշյալ ռիսկերը պահանջում են պատշաճ կառավարման մեխանիզմների ստեղծում, որից և մեծապես կախված է գյուղատնտեսության ֆինանսավորման խնդրի լուծումը: Ռիսկերի պատշաճ կառավարումը բերելու է վարկավորման տոկոսադրույքների մակարդակի նվազեցման, վարկերի ժամկետայնության երկարացման և ապահովվածության պահաջումների մեղմացման:

Եթե ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմի ստեղծման գործում պետության դերամասնակցությունը անխուսափելի է, ապա նույնը չի կարելի է ասել գյուղատնտեսության վարկավորման և սուբսիդավորման մասին: Գյուղատնտեսության վարկավորումը չի կարող լինել բացառապես կամ գլխավորապես պետական մենաշնորհը կամ պատասխանատվությունը: Ինչպես արդեն նշեցինք, ոլորտի պահանջարկը վարկային միջոցների նկատմամբ շատ ավելին է, քան պետության կողմից ուղղվող ֆինանսական ռեսուրսները: Բացի այդ, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների կողմից վարկային միջոցների օգտագործումն անընդհատ և բնականոն երևույթ է, ինչպես և ցանկացած այլ արտադրության մեջ ընդգրկված տնտեսվարող սուբյեկտի համար: Այս պարագայում խիստ կարևոր է ֆինանսավորման այնպիսի համակարգի ստեղծումը, որը գործում է նույն անընդհատության սկզբունքի վրա հավաքագրելով ազատ դրամական միջոցները տնտեսության մեջ և ուղղորդելով դեպի դրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնող ոլորտները, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտ: Վերջինս, ազատ շուկայական տնտեսական համակարգ ունեցող ցանկացած երկրում,

իրականացվում է ֆինանսական շուկայի միջոցով: Միայն ֆինանսական շուկայի միջոցով գյուղատնտեսության վարկավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծման միջոցով կարելի է խոսել ոլորտի պահանջակից համապատասխան կայուն և երկարատև վարկավորման մասին, որն անկախ կլինի պետական միջոցների վերաբաշխման գերակայություններից և դրանց մեծությունից: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պետական ակտիվ սուբսիդավորումը և, մեծամասամբ, պետական միջոցների շեշտադրումը գյուղատնտեսության ֆինանսավորման և վարկավորման գործում կարող է նպաստել մեծապես պարտքի աճին և դրանով պայմանավորված նաև ֆինանսական ճգնաժամի: Պետական պարտքը և դրա ֆինանսավորումն իր հերթին ենթադրում է զգալի հարկային բեռ սպառողների համար, ինչը հատկապես արդիական է զարգացող երկրների համար: Այսպես, Հնդկաստանում գյուղատնտեսության պետական սուբսիդավորումը 1999-2000թթ. հասնում էր երկրի ՀՆԱ-ի մոտ 3%-ի, մինչդեռ մասնավոր կապիտալն ընդգրկված էր այստեղ միայն ՀՆԱ-ի 0.4%-ի չափով: Վերլուծությունները ցույց են տալիս նաև, որ պետական սուբսիդավորման քաղաքականության արդյունքներն էլ հավասար ազդեցություն չեն ունենում տնտեսվարող սուբյեկտների վրա: Մասնավորապես, քաղաքականությունից առավել շահում են խոշոր արտադրողները: Եվրոպայում ֆերմերների խոշորագույն 4% ստանում է աջակցության 21%, իսկ ԱՄՆ-ում խոշորագույն 5% ստանում է աջակցության 20%¹⁸:

Հասկանալի է, որ նման մոտեցումը չի կարող ծառայել որպես ոլորտի ֆինանսավորման երկարաժամկետ և արդյունավետ մեխանիզմ: Մասնավոր կապիտալով և ֆինանսական շուկայի միջոցով ֆինանսավորման ապահովումը թույլ է տալիս նաև ուղղել պետական միջոցներն այլ պետական ծրագրերի

¹⁸ “Agriculture investment sourcebook”, Module 1: Building Agricultural Policy and Institutional Capacity, WorldBank, May 2006,

Ֆինանսավորմանը, ինչպիսիք են սոցիալական ապահովությունը, ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Պետության դերն այստեղ երկակի է՝ նախևառաջ ձեռնարկել համապատասխան քայլեր նվազեցնելու ոլորտի համակարգային ռիսկերը կապված, մասնավորապես, գյուղատնտեսական արտադրանքի գների և իրացման հետ, այնուհանդերձ ապահովել երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների առկայությունը: Միաժամանակ, պետական սահմանափակ ռեսուրսները պետք է նպատապատուղով են հատկապես այն թիրախավորված արտադրության ոլորտները, որոնք ունեն զարգացման հատուկ պոտենցիալ և մրցակցային առավելություններ:

Գյուղատնտեսության վարկավորմանը նոր թափ հաղորդելու համար կարևոր է համապատասխան մասնագիտացված ֆինանսական կառույցների ձևավորումը: Պետությունը պետք է աջակցի և շարժառիթներ ստեղծի նման կառույցների հիմնման և զարգացման համար: Որպես օրինակ կարող են ծառայել զարգացած և զարգացող շատ երկրներում գործող հետևյալ առևտրային կազմակերպությունները՝

- **Գյուղատնտեսական բանկերը**, որոնք կարող են լինել նաև պետական որոշակի մասնակցությամբ կամ առանց դրա և մասնագիտացված են գլխավորապես գյուղատնտեսության համար նախատեսված վարկային, ավանդային և այլ պրոդուկտների մշակման և ներդրման գործում: Այս բանկերը ձևավորում են նաև համապատասխան շրջանային ցանց, որը թույլ է տալիս առավել մոտ լինել գյուղացիական տնտեսություններին, նվազեցնել սպասարկման ծախսերը և, միաժամանակ, առավել հարմարավետ և հասանելի լինել գյուղացիական տնտեսությունների համար ոչ պակաս կարևոր ավանդային ծառայություններից օգտվելու համար: Միևնույն ժամանակ, մասնագիտանալով գյուղատնտեսական արտադրանքի գծով հնարավոր է դառնում նաև ձևավորել այն անհրաժեշտ փորձն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են այդ ոլորտի առանձնահատկություններով

պայմանավորված բարդությունների հաղթահարման համար, որոնք առնչվում են, մասնավորապես, բիզնեսի զարգացման գնահատման և ռիսկերի կառավարման հետ:

- **Միկրոֆինանսավորման ոլորտում մասնագիտացված կազմակերպությունները** (Microfinance institutions, MFIs), որոնք մասնագիտացված են առավել փոքր եկամուտներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների համար փոքր գումարներով վարկային պրոդուկտների ներդրման գործում, հանդիսանում են մյուս կարևոր կառույցներից են ոլորտի վարկավորման առումով:
- **Անդամակցության վրա հիմնված ֆինանսական կազմակերպությունները**, որոնք հանդիսանում են վարկային միություններ, կոոպերատիվներ, որոնց անդամակցությունը պայմանավորված կարող է լինել ինչպես մասնակիցների համայնքային պատկանելիությամբ, այնպես էլ՝ գործունեության տեսակով: Այս կազմակերպությունները ձևավորելով ֆինանսական ռեսուրսներ նաև իրենց անդամներից, որոնք հանդիսանում են կազմակերպության սեփականատերերը, մասնագիտացված են իրենց անդամներին գրավիչ պայմաններով ֆինանսական ռեսուրսների տրամադրմամբ, ինչպես նաև ֆինանսական այլ ծառայությունների մատուցմամբ: Այս կազմակերպությունների հիմնական առավելությունները կայանում են նրանում, որ նրանք կարողանում են նվազեցնել տրանզակցիոն և սպասարկման ծախսերը, որոնք անդրադառնում են վերջին հաշվով ֆինանսական ծառայությունների գների վրա, նվազեցնել գրավային պահանջներն անդամների նկատմամբ, լինել ավելի զգայուն անդամների կարիքների նկատմամբ և մշակել պրոդուկտներ, որոնք առավելագույս բխում են անդամների շահերից և գրավիչ են նրանց համար: Կարևոր է, որ այս կառույցների հիմնական նպատակն է հանդիսանալու անդամների համար ֆինանսական ծառայությունների մատուցումը, ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումը և ոչ թե շահույթի մաքսիմալացումը, որն ավելի հատկանշական է բանկերին: Միավորելով համայնքի կամ կոնկրետ արտադրանքի գծով մասնագիտացված արտադրողներին

այս կառույցները վերածվում են ամուր միավորների ընդհանուր շահերով, սկզբունքներով և նպատակներով և կարողանում լավագույնս ներկայացնել իրենց անդամների շահերը տարբեր մակարդակներում թե՛ ֆինանսական միջոցներ ներգրավելիս, թե՛ պետական աջակցություն ստանալիս: Բացի, անդամների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներից, վարկային միությունները կարող են ներգրավել ֆինանսական ռեսուրսներ ինչպես պետական աջակցության շրջանակներում, այնպես էլ՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններից՝ մասնագիտացված հատկապես գյուղատնտեսական ծրագրերի ֆինանսավորման ուղղությամբ: Հայաստանի համար հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները այս կազմակերպությունների ձևավորումը և զարգացումը պետք է կատարվի պետական աջակցությամբ: Նշենք, որ անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների հաջող գործունեության փորձ առկա է Լատինական Ամերիկայի շատ երկրներում, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում:

Ի լրումն, վերոհիշյալ մասնագիտացված կառույցների, փոխառություններ գյուղատնտեսություններին կարող են տրամադրվել նաև գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ գնմամբ, վերամշակմամբ և/կամ արտահանմամբ զբաղվող ընկերությունների կողմից: Կարևոր է այստեղ պետության կողմից այնպիսի հարկային, մաքսային և նմանատիպ այլ շարժառիթների ստեղծումը նշված ընկերությունների համար, որը տնտեսապես շահավետ կդարձնի երկուստեք երկարաժամկետ համագործակցությունը գյուղատնտեսական արտադրանք արտադրողների և այն վերամշակող ու արտահանող ձեռնարկությունների միջև՝ կապված փոխառությունների տրամադրման, անհրաժեշտության դեպքում, հետվճարումների տարկետման, ինչպես նաև ձեռքբերման գնի և ծավալների շուրջ հստակ պայմանավորվածության արդյունքում՝ գյուղացիական տնտեսությունների համար գնային և իրացման ռիսկերի նվազեցման հետ:

Վարկավորման հետ մեկտեղ գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտացված կառույցների կողմից պետք է առաջարկվեն նաև այլ ծառայություններ, ինչպիսիք են ավանդների ընդունումը, փոխանցումների կատարումը, լիզինգային գործառնություններ¹⁹: Ավանդների ներգրավումը կարևոր է վարկավորման համար ֆինանսական ռեսուրսների հավաքագրման տեսանկյունից, մյուս կողմից այն նաև լրացուցիչ եկամտի աղբյուր կհանդիսանա այն գյուղացիական տնտեսությունների համար, որոնք ունեն ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ և ավանդադրելով տարբեր ժամկետայնությամբ կստանան դրանց դիմաց տոկոսներ:

Վարկավորման գործընթացում առանձնակի կարևորություն են ներկայացնում վարկավորման պայմանները՝ ժամկետայնություն, տոկոսադրույքներ, արժույթ, ապահովվածության և այլն: Ժամկետայնության տեսանկյունից հատկապես կարևոր են երկարաժամկետ վարկերը, որոնք թույլ կտան ուղղել դրանք երկարաժամկետ օգտագործման գույքի՝ գյուղատնտեսական տեխնիկայի, հողատարածքների, անասնազվիսի ձեռքբերմանը՝ ապահովելով եկամուտներ երկարաժամկետ ժամանակահատվածի համար: Նմանատիպ վարկերի երկարաժամկետ ժամկետայնության կարևորությունը կայանում նաև նրանում, որ այդ դեպքերում գործ ունենք բավականին մեծ գումարների հետ, որոնց վերադարձելիությունը կարող է ապահովվել միայն երկարաժամկետ ժամանակահատվածում: Կարճաժամկետ վարկերը, որոնք ստիպված կուղղվեն հիմնական միջոցների ձեռքբերմանը կարող են կործանարար լինել տնտեսությունների համար:

¹⁹ Լիզինգի պայմանագրով կողմը պարբերական վճարումներ է իրականացնում սարքավորման օգտագործման համար, մինչ այդ սարքավորման նկատմամբ սեփականության իրավունքը շարունակվում է մնալ լիզինգային կազմակերպության օգտին: Որոշակի ժամանակահատված մարումների կատարումից հետո միայն սարքավորման նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել օգտագործողին:

Հայաստանում պետական միջոցներից իրականացվող վարկավորման պայմանները չեն առանձնանում իրենց ոչ՝ ժամկետային, ոչ՝ տոկոսային և ոչ՝ էլ գումարային գրավչությամբ: Արդյունքում այդ գումարներն ուղղվում են հիմնականում կենցաղային տարբեր խնդիրների լուծմանը և ոչ թե օգտագործվում արտադրական նշանակությամբ՝ խթանելով եկամտի աճին: Այդ վարկերը, ընդհանուր առմամբ, ուղղվելով գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորմանը չեն տրամադրվում կոնկրետ նպատակով՝ տեխնիկայի ձեռքբերում, մշակվող տարածքների ընդլայնում, գյուղացիական տնտեսության ընդլայնում, իսկ վարկի ստացումից հետո դրանց ոչ նպատակային օգտագործումը, ըստ էության, չի փոխում որևէ բան և որևէ կերպ չի կոմպենսացնում՝ այն կորուստները, որոնք առաջանում են ոչ արտադրական նպատակով դրանք օգտագործելու արդյունքում:

Այսպես, ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի թիվ 349 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի» համաձայն տոկոսադրույքների սուբսիդավորմամբ վարկերը կարող են օգտագործվել, մասնավորապես, հետևյալ նպատակներով՝

- բարձր վերարտադրության սերմերի արտադրություն.
- հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի արտադրություն.
- բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրություն.
- կարտոֆիլի արտադրություն.
- այգեգործություն.
- ծածկած գրունտում բանջարեղենի արտադրություն.
- բազմամյա կերային մշակաբույսերի արտադրություն.
- շաքարի ճակնդեղի արտադրություն.
- բարձր մթերատու անասնազվիսաքանակի մայրական կազմի ձեռքբերումը և բուծում.
- նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում.

- այլ գյուղատնտեսական մթերքի արտադրություն:

Ինչ վերաբերում է վարկի մեծությանը և ժամկետայնությանը, ապա յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլն ՀՀ դրամը, իսկ առավելագույն ժամկետը՝ 2 տարի: Դրական է այն փաստը, որ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով միայն և դրանով իսկ գյուղացիական տնտեսություններին զերծ է պահվում արտարժույթային լրացուցիչ ռիսկերից: Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա առավելագույնս այն կարող է կազմել 14%, որից սուբսիդավորվելու է 4%-ը, այնսինքն՝ փաստացի գյուղացիական տնտեսությունների համար տոկոսադրույքը կազմելու է առավելագույնը 10%: հասկանալի է, որ միայն վարկային բոլոր պայմանների համակցության արդյունքում հնարավոր է գնահատականներ տակ դրանց գրավչության և արդյունավետության մասին: Այս պարագայում, առկա են բազմաթիվ խնդիրներ. նախ նպատակի ընդհանուր լինելու արդյունքում լավագույն դեպքում այդ գումարները կուղղվեն շրջանառու միջոցների, ընթացիկ խնդիրների՝ վառելանյութ, անասնակեր և այլն ձեռքբերմանը, իսկ ամենայն հավանականությամբ հիմնականում անձնական սպառողական նպատակներով կամ մեկ այլ պարտքի մարման համար: Այս հանգամանքին նպաստում է նաև գումարային սահմանափակումը՝ առավելագույնը 3 մլն. ՀՀ դրամի չափով և սահմանափակ առավելագույն ժամկետը՝ 2 տարի, ինչը թույլ չի տալիս գործնականում օգտագործել այդ գումարները նոր տեխնիկայի ձեռքբերման և կապիտալ այլ ներդրումների համար, որոնք պահանջում են թե՛ գումարային զգալի ներդրում, թե՛ ավելի երկար մարման ժամկետ:

Այստեղ է, որ պետք է խոսել պետական սահմանափակ միջոցների արդյունավետ օգտագործման մասին: Այդ միջոցները նախ պետք է գրավիչ լինեն գյուղացիական տնտեսությունների համար իրենց գումարային մեծության տեսանկյունից, որը թույլ կտա ֆինանսավորել արտադրական նշանակության գույքի ձեռքբերումը, իսկ

Ժամկետայնության տեսանկյունից՝ լինել երկարաժամկետ՝ առնվազն 5 տարի մարման ժամկետով: Առաջնային պետք է լինի միջոցների նպատակային օգտագործումը կոնկրետ զարգացում ենթադրող պրոյեկտների ֆինանսավորման ուղղությամբ և ոչ թե դրանց մանրացումը և փոշիացմանը, որը բերում է հիմնականում դրանց ոչ նպատակային օգտագործմանը: Ակնհայտ է, որ նպատակային պրոյեկտների, թեկուզև սահմանափակ քանակի աճը շրջայական ազդեցություն է ունենալու նաև ինչպես մյուս գյուղացիական տնտեսությունների համար, այնպես էլ՝ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ և/կամ արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների զարգացման գործում: Վերջինս էլ իր հերթին կրկին նպաստելու է գյուղացիական տնտեսությունների աճին կայուն պահանջարկի ապահովման շնորհիվ:

Որպես գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման հնարավորության ընձեռնման մեխանիզմ կարևորվում է լիզինգի զարգացումը, որը հնարավորություն կտա երկարաժամկետ ֆինանսավորմամբ ձեռք բերել պահանջվող տեխնիկան և դրա դիմաց մարումներն իրականացնել պարբերական վճարումների միջոցով՝ երկարաժամկետ ժամանակահատվածում: Լիզինգի գրավչությունը հատկապես տեխնիկայի ձեռքբերման համար կարևորվում է նաև նրանով, որ ձեռքբերվող գույքը հենց հանդիսանում է որպես վարկային պարտավորության ապահովման միջոց՝ դրանով իսկ ազատելով գրավադրվող այլ գույքի հայթայթման անհրաժեշտությունից: Վարկից, որպես կանոն, այն շահավետ տարբերվում է նաև պարբերական մարումների ավելի փոքր մեծությամբ, ինչը դարձնում է այս ծառայությունն ավելի հասանելի փոքր եկամուտներ ունեցող տնտեսությունների համար: Ընդ որում, այստեղ հնարավոր է լիզինգի երկու տարբերակների աշխատանքը, երբ լիովին վճարվում է ձեռքբերված տեխնիկայի համար և այն անցնում է օգտագործողի սեփականությանը կամ պարբերական վճարումները դադարեցվում են ընթացքում, իսկ սեփականության իրավունքը մնում է լիզինգային կազմակերպությանը: Այսինքն, նույնիսկ

սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ ունեցող տնտեսվարող սուբյեկտները կարող են շահել լիզինգից՝ օգտվելով դրանից կարճաժամկետ ժամանակահատվածում և ավելացնելով զգալիորեն արտադրողականությունը և եկամտաբերությունը: Պետական քաղաքականությունն այստեղ պետք է ուղղված լինի շուկայում գրավիչ պայմաններով լիզինգային ծառայությունների մատուցման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը գյուղացիական տնտեսությունների համար, այդ թվում՝ տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով:

Գյուղատնտեսության ֆինանսավորման միջնորդավորված եղանակի հետ մեկտեղ կարևոր նոր մեխանիզմների ստեղծումը, որը կհանդիսանա նաև այլընտրանք բանկային ֆինանսավորման: Խոսքը գնում է ուղղակի ֆինանսավորման մասին, արժեթղթերի շուկային միջոցով՝ օգտագործելով ներդրումային տարբեր ինստրումենտներ ինչպիսիք են բաժնետոմսերը և պարտատոմսերը: Ուղղակի ֆինանսավորումը ողջ աշխտարհում լայնորեն կիրառվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից բանկային ֆինանսավորման հետ մեկտեղ և ունի նաև մի շարք առավելություններ մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման նկատմամբ: Նախ արժեթղթերի թողարկման միջոցով ֆինանսական միջոցներ ներգրավելիս բացակայում են գրավային պահանջները և միջոցների գրավադրում, որպես այդպիսին, չի պահանջվում ինչպես վարկի դեպքում: Բացի այդ, արժեթղթերի թողարկման միջոցով հնարավոր է լինում ներգրավել միջոցներ ավելի երկար ժամանակաշրջանի համար (տասը և ավելի տարի): Ընդ որում, փոխառության ժամկետայնությունը խիստ կարևոր լինելով գյուղատնտեսության դեպքում ամեննին էլ ոչ գրավիչ չի դարձնում թողարկվող արժեթուղթը հավանական ներդրողների համար այն պարզ պատճառով, որ այս դեպքում ներդրողն ունենում է իր ձեռքին ֆինանսական միջոցների ներդրումը հավաստող իրացվելի ֆինանսական գործիք (արժեթուղթ), որը ցանկացած ժամանակ հնարավոր է վաճառել ստանալով ներդրված միջոցները և դրանց նկատմամբ կուտակված տոկոսները: Մյուս կարևոր առանձնահատկությունն արժեթղթերով ֆինանսավորման դեպքում, այն է, որ

տոկոսադրույքներն այս պարագայում ավելի ցածր են քանի որ միջոցները ներգրավվում են անմիջական սեփականատերերից՝ խնայողություններ կատարողներից և ոչ թե միջնորդ ֆինանսական կազմակերպություններից, որոնք լրացուցիչ մարժա են կիրառում իրենց ծառայությունների համար: Վերջապես, արժեթղթերի թողարկման միջոցով ուղղակի ֆինանսավորման դեպքում հնարավոր է դառնում ներգրավել ավելի մեծ ծավալի ֆինանսական ռեսուրսներ, քան ֆինանսական կազմակերպությունների միջնորդությամբ ֆինանսավորման դեպքում: Այն առավել արդիական և կարևոր է մեծ ֆինանսական ներդրումների կարիք ունեցող տնտեսվարող սուբյեկտների համար:

Այսպիսով, բանկային վարկի նկատմամբ արժեթղթերի միջոցով ֆինանսավորումն ունի իր առավելությունները թե՛ ֆինանսական ռեսուրսների կարիք ունեցող արտադրողների համար և թե՛ ներդրողների համար: Վերջիններս ձեռք են բերում իրացվելի ֆինանսական գործիք և իրենց կողմից ներդրված գումարները ստանալու համար ստիպված չեն լինի սպասել մինչև արժեթղթի թողարկման ժամկետի ավարտը, այլ ժամանակի ցանկացած պահի կարող են իրացնել այդ արժեթուղթը և ստանալ ներդրված միջոցները և կուտակված տոկոսները:

Հասկանալի է, որ արժեթղթերի միջոցով ֆինանսավորման ապահովումը պահանջում է նաև համապատասխան մեխանիզմների ստեղծում և համակարգի պատշաճ ներկայացում ու լուսաբանում գյուղացիական տնտեսություններին: Այն կարող է ավելի հարմար տարբերակ լինել գյուղ մթերքների արտադրությամբ, վերամշակմամբ և արտահանմամբ զբաղվող խոշոր տնտեսվարող սուբյեկտների համար, սակայն պակաս օգտակար չեն լինի նաև փոքր տնտեսությունների համար:

Փոքր տնտեսությունների կողմից արժեթղթերի թողարկումը, բնականաբար, չի կարող շահավետ լինել և առանձին վերցված այդ տնտեսությունները ի վիճակի չեն

թողարկելու ներդրողների համար գրավիչ ֆինանսական գործիքներ: Սակայն այս փոքր տնտեսությունների միավորումը, մասնավորապես, ըստ համայնքների կամ արտադրատեսակի, այդ թվում՝ վարկային միություններում, լիովին փոխում է իրավիճակը: Արժեթղթերի թողարկան միջոցով ֆինանսական ռեսուրսների ներգրավման համակարգի կայացման գործում խիստ կարևոր է պետական նպատակաուղղված քաղաքականությունը և աջակցությունը: Մասնավորապես, թողարկվող արժեթղթերի ներդրումային գրավչության բարձրացման համար նպատակահարմար կլինի պետական երաշխիքների տրամադրումը գոնե սկզբնական ժամանակաշրջանում, որը լրացուցիչ ապահովության միջոց կհանդիսանա ներդրողների համար և կբարձրացնի թողարկվող արժեթղթերի իրացվելիությունը՝ առանց որի դժվար է ապահովել այդ համակարգի արդյունավետ աշխատանքը: Պետական երաշխիքները կարող են օգտագործվել նաև ֆինանսական կազմակերպությունների միջոցները գյուղատնտեսության ոլորտ ուղղորդելու համար՝ չստանձնելով միևնույն ժամանակ ողջ վարկային ռիսկը, որը չարաշահումների տեղիք կարող է տալ, երբ ֆինանսական ռեսուրսները կարող են տեղաբաշխվել առանց դրանց վերադարձելիության ռիսկի պատշաճ գնահատման, ելնելով այն հանգամանքից, որ վարկերը երաշխավորված են յուրաքանչյուր պարագայում և խնդիրների դեպքում պետական երաշխիքը ծածկելու է բոլոր վնասները: Երաշխիքների միջոցով վարկային ռիսկի մասնակի ապահովագրման այս մեխանիզմը գյուղատնտեսության ֆինանսավորման մեջ կիրառվում է տարբեր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում՝ որպես միջոց մասնավոր կապիտալը գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտ ուղղորդելու համար²⁰:

Երաշխիքների օգտագործումը ապրանքներ արտադրողների և գնորդ կազմակերպությունների միջև կայուն և երկարաժամկետ հարաբերությունների

²⁰ “Innovative financing for agriculture, food security and nutrition”, Report of the high-level expert committee to the leading group on innovative financing for agriculture, food security and nutrition, International Expert Report, December, 2012.

հաստատման կարևոր միջոց կարող է նաև հանդիսանալ: Այսպիսով, երաշխիքների տրամադրումը որպես ֆինանսավորման խթանման գործիք նույնպես կարող է օգտագործվել պետության կողմից՝ բանկային միջոցները դեպի գյուղատնտեսության ֆինանսավորումն ուղղորդելու համար և հատկապես այնպիսի ձեռնարկությունների ֆինանսավորման մասով, որոնք կարևոր դերամասնակցություն ունեն ինչպես գյուղատնտեսական ապրանքների արտադրության, այնպես էլ՝ վերամշակման և արտահանման փուլերում:

Գյուղատնտեսության ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ստեղծման և վարկավորման խթանման համար կարևոր նշանակություն ունի ապահովագրական համակարգի ներդրումը: Այն իր ազդեցությունն ունի ոչ միայն դեպի այս ոլորտը ֆինանսական ռեսուրսների ուղղորդման, այն՝ գյուղատնտեսության, ընդհանուր առմամբ, զարգացման և գործող տնտեսությունների եկամուտների ավելացման գործում: Գյուղատնտեսական ապրանքների արտադրության ոլորտում, բնակլիմայական պայմաններով պայմանավորված, արտադրական ռիսկերի կառավարման գործում խիստ կարևորվում է ապահովագրական մեխանիզմների ներդրումը, որոնք թույլ կտան չեզոքացնել կամ նվազեցնել հնարավոր բացասական զարգացումները և եկամտի կորուստները: Ապահովագրական պրոդուկտները կարող են ներառել, մասնավորապես, վարկի, բերքի, կյանքի ապահովագրությունները: Միջազգային պրակտիկայում լայն տարածում են գտել նաև եղանակային և գնային ինդեքսներով պայմանավորված ապահովագրական պրոդուկտները:

Ինչպես արդեն նշեցինք, գյուղատնտեսության ֆինանսավորման գործում առանցքային ռիսկերից, որոնք հաշվի են առնվում բանկերի և ֆինանսական այլ կազմակերպությունների կողմից հանդիսանում են գյուղատնտեսությանը հատկանշական համակարգային ռիսկերը: Մոտեցումներից մեկը, որ կարող է օգտագործվել ֆինանսական կազմակերպությունների կողմից դա պորտֆելի

դիվերսիֆիկացիան է ինչպես աշխարհագրական, այնպես էլ՝ գյուղատնտեսական արտադրությունների առումով: Այլ կերպ ասած, դիվերսիֆիկացնելով վարկային պորտֆելը երկրի տարբեր մարզերում և տարբեր գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ ընդգրկված տնտեսությունների միջև հնարավոր է նվազեցնել բնակլիմայական պայմաններով, աշխարհագրական դիրքով և արտադրատեսակով պայմանավորված ռիսկերը:

Ռիսկերի կառավարման մյուս մեխանիզմը դա հեջավորման գործիքների ներդրումն ու օգտագործումն է, որը հնարավորություն է տալիս ավելի ակտիվ լինել գյուղատնտեսության վարկավորման գործում ֆինանսական կազմակերպություններին՝ լրացուցիչ երաշխավորելով վարկերի վերադարձելիությունը: Ընդ որում, որպես կանոն, ապահովագրման ենթակա են ոչ թե համակարգային ռիսկերը, այլ՝ իդեոսինկրատիկ կամ առանձին գյուղացիական տնտեսությանը ներհատուկ ռիսկերը: Համակարգային ռիսկերի դեպքում, ինչպիսիք են օրինակ երաշտը կամ ջրհեղեղը, հասկանալի է, որ կորուստները համատարած բնույթ են կրում և անհնար է դառնում դրանց փոխհատուցումը նման ծավալներով: Համակարգային ռիսկերի պարագայում մասնավոր ապահովագրական համակարգն հաճախ ի գործու չէ ապահովել փոխհատուցումները նման ծավալներով և այստեղ կարևորվում է պետական աջակցությունը գյուղացիական տնտեսություններին փոխհատուցման կամ պարտավորությունների սուբսիդավորման տեսքով: Ինչ վերաբերում է առանձին գյուղացիական տնտեսությանը ներհատուկ ռիսկերի ապահովագրմանը, ապա ապահովագրական մեխանիզմների ներդրումն այստեղ հնարավոր է, սակայն խիստ կարևորվում է նաև պետական ակտիվ միջամտությունը համակարգի ներդրման և բարենպաստ պայմանների ստեղծման գործում: Հասկանալի է, որ ապահովագրական համակարգի արդյունավետ աշխատանքի դեպքում վարկավորման տեսանկյունից գյուղացիական տնտեսությունների կողմից ստանձնած պարտավորությունների վերադարձելիության լրացուցիչ երաշխիքներ են ի հայտ

գալիս, որոնք ուղղակիորեն ազդում են ինչպես վարկավորման ծավալների մեծացման, այնպես էլ՝ վարկի տոկոսադրույքների նվազեցման վրա: Այսինքն, ապահովագրական համակարգի ներդրումը հատկապես վարկավորման խթանման գործում ունի իր էական ազդեցությունը: Սակայն պետք է նշել, որ այն կարևորվում է նաև վարկային պրոդուկտներից չօգտվող գյուղացիական տնտեսությունների համար՝ կոմպենսացնելով այն կորուստները, որոնք կարող են առաջանալ բերքի ամբողջական կամ մասնակի կորստի դեպքում:

Միջազգային պրակտիկայում կիրառելի ապահովագրական սխեմաներից, որը կիրառվում է գյուղատնտեսության ոլորտում հանդիսանում է ինդեքսի վրա հիմնված ապահովագրությունը (Index-based insurance): Այսպես, օրինակ, եղանակի վրա հիմնված ինդեքսային ապահովագրությունը (Weather-based index insurance) ենթադրում է վճարումների իրականացում հիմնվելով չափելի եղանակային պայմանների (անձրևներ, ջերմաստիճան) որոշակի շեմից շեղումների վրա: Տարածքի վրա հիմնված ինդեքսային ապահովագրության դեպքում (Area-based index insurance) վճարումները կատարվում են տարածքի բերքատվության որոշակի շեմից բացասական շեղումներին համամասնորեն: Վերջին դեպքում, մասնավորապես, վճարումները կատարվում են, երբ տարածշրջանի միջին բերքատվությունը նվազում է սահմանված շեմից, օրինակ, նորմայի 80-ից պակաս:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրումը բավականին բարդ պրոցես է, որի գործարկման ուղղությամբ կարևորվում է պետական աջակցությունը, մասնավորապես, հետևյալ ուղղություններով.

- Համապատասխան իրավական համակարգի ձևավորումը, որը կնպաստի գյուղատնտեսական ապահովագրական պրոդուկտների մշակումը և ներդրումը,
- Տեխնիկական աջակցությունը ինդեքսային համապատասխան պրոդուկտների մշակման և թեստավորման գործում,

- Տվյալների բազաների ստեղծումը և պարբերական թարմացումը՝ ռիսկերի լավագույնս կառավարման համար,
- Գյուղացիական տնտեսություններին ապահովագրական պրոդուկտների, դրանց առանձնահատկությունների և առավելությունների ներկայացումը:

Հաշվի առնելով միջազգային հարուստ փորձն այս առումով և տարբեր երկրներում ապահովագրական նման մեխանիզմների ներդրման արդյուքները, տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներուժը նույնպես կարող է օգտագործվել համակարգի ներդրման համար²¹:

Արտահանում

Որպես գյուղատնտեսական ապրանքների արտադրության և արտահանման խթանման միջոցառումներ կարող են հանդիսանալ հարկային և մաքսային արտոնությունների տրամադրումը, ինչպես նաև տեղական արտադրողների պաշտպանությունը ներմուծման մաքսատուրքերի միջոցով: Սակայն տվյալ գործիքի կիրառումը խիստ սահմանափակ և նպատակադրված պետք է լինի, քանի որ դրա կիրառության հետևանքները միանշանակ չեն: Օտարերկրյա մրցակից ապրանքների ներմուծման սահմանափակումը հանգեցնելու է ներմուծվող ապրանքների գների բարձրացմանը տեղական շուկայում և ընտրության սահմանափակմանը՝ ուղղակիորեն վնասելով տեղական սպառողներին: Ըստ այդմ, այս գործիքը կարող է օգտագործվել թերևս բացառապես այն ապրանքատեսակների գծով, որոնք ցուցաբերում են արագ զարգացում և որակական և գնային մրցունակության ամրապնդում թե՛ տեղական և թե՛ միջազգային շուկաներում, ինչը թույլ է տալիս վերացնել սահմանափակումները և ազատականացնել ներմուծումը: Բացի այդ, այս

²¹ Այսպես, Միջազգային ֆինանսական կազմակերպությունը (IFC) աջակցել է գյուղատնտեսական ապահովագրական բյուրոյի հիմնմանը, համապատասխան ապահովագրական պրոդուկտների մշակմանը և գյուղացիական տնտեսությունների շրջանակներում կրթական միջոցառումների իրականացմանը (Աղբյուրը՝ IFC Advisory Services, Access to Finance, Annual review 2011):

քայլերին հնարավոր է դիմել միայն այն սահմանափակումների շրջանակներում, որոնք գործում են ԱՀԿ (WTO) կողմից սահմանված կանոններով:

Պետությունը ակտիվ դերամասնակցություն պետք է ունենա գյուղատնտեսական ապրանքների արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների ստեղծման և դրանց զարգացման գործում: Բարենպաստ պայմաններ պետք է ստեղծվեն նման բիզնեսով զբաղվելու և այս ոլորտում գործող կազմակերպությունների քանակի ավելացման և ազատ մրցակցության համար: Պետական աջակցությունն այս ուղղությամբ, ի լրումն հարկային և մաքսային արտոնություններից և վարչարարության կրճատումից, պետք է ներառի, մասնավորապես, աջակցություն արտահանման ձեռնարկությունների հիմնման գործում, այդ թվում՝ նպատակային ֆինանսավորում, մասնակցություն հիմնադրվող ձեռնարկություն կապիտալում, աջակցություն օտարերկրյա իրացման շուկաների բացահայտման և ապրանքների արտահանման կազմակերպման գործում և այլն: Առանձնակի շեշտադրում պետք է դրվի այն ապրանքատեսակների վրա, որոնց գծով Հայաստանն ունի մրցակցային առավելություններ: Ընդ որում, արտահանման խթանման պետական աջակցության ռազմավարությունը պետք է իրականացվի ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքների գծով, այլ նաև՝ դրանց վերամշակումից ստացվող ապրանքատեսակների մասով, ինչը նույնպես հանդիսանում է պահանջարկի կարևոր աղբյուր: Գյուղատնտեսական արտադրանքի և դրանց վերամշակումից ստացվող ապրանքների արտահանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն մակրոտնտեսական տեսանկյունից երկրի զարգացման առումով, այլև՝ նախևառաջ գյուղատնտեսության համար դիվերսիֆիկացված իրացման շուկաների ձևավորման տեսանկյունից: Այն ազատում է տեղական արտադրողների բացառապես կամ գլխավորապես տեղական շուկայից կախվածությունից և, ի լրումն տեղական շուկայի, երաշխավորելու է կայուն աճող պահանջարկ արտադրանքի նկատմամբ: Իրացման շուկաների դիվերսիֆիկացիան հանդիսանում է միջազգային բիզնեսի հաջող իրականացման գրավականներից մեկը՝ ապահովելով պահանջարկի

կայունություն և նաև անընդհատ աճ՝ անկախ միջազգային տարբեր շուկաներում պահանջարկի բացասական տատանումներից: Ակնհայտ է, որ կանխատեսելով և ունենալով հստակ պահանջարկ ստացվելիք ապրանքի նկատմամբ և որոշակիություն իրացման գների վերաբերյալ, ըստ էության, գրոյականացվում են գնային և իրացման ռիսկերը, որոնք կարևոր դերակատարում ունեն հատկապես գյուղատնտեսական ապրանքների արտադրության կազմակերպման գործում: Կարևորելով արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների ձևավորումը և զարգացումը, պետք է նշել, որ դրանք նաև պետք է գտնվել պետական խիստ հսկողության տակ՝ չարաշահումներից խուսափելու համար: Այն հատկապես արդիական է մոնոպոլ դիրքեր ունեցող ընկերությունների դեպքում, որոնք կարող են իրենց մոնոլոպ դիրքի շնորհիվ գերշահույթների ստացման քաղաքականություն վարել նվազեցնելով գյուղմթերքների ձեռքբերման գները տեղում և իրացնելով այն դրսում մեծ մարժայով: Վերջինս կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ ոչ միայն գյուղացիական արտադրանքի ավելացման մասով, այլև՝ նպաստել արտադրության ծավալների կրճատմանը: Հայաստանն արտահանման խթանման գործուն քայլերի ձեռնարկման շնորհիվ պետք է ձգտի լիարժեքորեն օգտվել ինչպես Մաքսային միության, այնպես էլ՝ ԱՀԿ-ի Ազգերի առավել բարենպաստ ռեժիմի ընձեռած հնարավորություններից:

Այսպիսով, արտահանման ռազմավարությունը պետք է ներառի պետական տարբեր կառույցների կողմից համակարգված և միասնական քաղաքականության իրականացում, որը մասնավորապես, պետք է ներառի հետևյալը.

- Հարկային և մաքսային խթանների ստեղծում,
- Ֆինանսական աջակցություն արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների ստեղծման և դրանք գործունեության ընդլայնման գործում,
- Հատուկ առևտրային գոնաների ստեղծում, որոնք կառանձնանա իրենք արտոնյալ ռեժիմներով,
- Տրանզակցիոն ծախքերի նվազեցում, որոնք կապված են արտահանման հետ,

- Մաքսային միության և ԱՀԿ-ի Ազգերի առավել բարենպաստ ռեժիմի ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործում:

Առաջարկություններ

Ամփոփելով աշխատանքում կատարված վերլուծության արդյունքները և հաշվի առնելով միջազգային փորձն ու Հայաստանի առանձնահատկությունները ներկայացնում ենք գյուղատնտեսության ֆինանսավորման և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանման հետևյալ առաջարկությունները.

Գյուղատնտեսության ֆինանսավորման մասով.

1. Ապահովել պետական և միջազգային կազմակերպություններից ու հիմնադրամներից ստացվող սահմանափակ միջոցների թիրախավորված և արդյունավետ օգտագործումը՝ կողմնորոշված զարգացում ապահովող և համակարգային երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես, պետք է կարևորվեն տարբեր պրոյեկտները՝ ուղղված գյուղատնտեսական արտադրանքի արտադրմանը, վերամշակմանը կամ արտահանմանը, վարկերը, որոնք կուղղվեն երկարաժամկետ օգտագործման գույքի՝ գյուղատնտեսական տեխնիկայի, հողատարածքների, անասնազլխի ձեռքբերմանը՝ ապահովելով եկամուտներ երկարաժամկետ ժամանակահատվածի համար և մեծացնելով էապես արտադրողականությունը:
2. Ձեռնարկել ակտիվ պետական քաղաքականություն ուղղված դեպի գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտ մասնավոր կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ, որոնք մասնավոր կապիտալը՝ ֆինանսական շուկայի և շուկայական մեխանիզմների միջոցով, կուղղորդեն դեպի գյուղատնտեսության ֆինանսավորումը՝ ապահովելով վարկավորման ծավալների աճ, որն անհրաժեշտ է ոլորտի զարգացման համար և, միաժամանակ, կձևավորեն երկուստեք շահավետ

պայմաններ՝ թե՛ ֆինանսական կազմակերպությունների և թե՛ գյուղացիական տնտեսությունների համար:

3. Մշակել և հետևողականորեն իրականացնել գյուղատնտեսությանը հատկանշական ռիսկերի զսպման և դրանց պատշաճ կառավարման միջոցառումներ՝ նպաստելով ֆինանսական միջոցների հոսքին դեպի այս ոլորտ և խթանելով տոկոսադրույքների, գրավադրման պայմանների, վարկավորման արժույթի և վարկերի ժամկետայնության հետ կապված խնդիրների լուծմանը:
4. Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող նոր մասնագիտացված ֆինանսական կառույցների ձևավորման և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ: Որպես օրինակ կարող են ծառայել Գյուղատնտեսական բանկերը, Միկրոֆինանսավորման ոլորտում մասնագիտացված կազմակերպությունները (Microfinance institutions, MFIs), Վարկային միությունները, Անդամակցության վրա հիմնված ֆինանսական կազմակերպությունները:
5. Ապահովել մասնագիտացված կառույցների կողմից վարկավորման ծառայությունների հետ մեկտեղ ավանդային ծառայությունների ակտիվ օգտագործումը, որը թույլ կտա մի կողմից հավաքագրել վարկավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները, մյուս կողմից՝ նաև լրացուցիչ եկամտի աղբյուր կհանդիսանա այն գյուղացիական տնտեսությունների համար, որոնք ունեն ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ և ավանդադրելով տարբեր ժամկետայնությամբ կստանան դրանց դիմաց տոկոսներ:
6. Ապահովել հարկային, մաքսային և այլ արտոնություններ, որոնք տնտեսապես շահավետ կդարձնեն երկուստեք երկարաժամկետ համագործակցությունը գյուղատնտեսական արտադրանք արտադրողների և այն վերամշակող ու արտահանող ձեռնարկությունների միջև՝ կապված վերջիններիս կողմից փոխառությունների տրամադրման, հետվճարումների տարկետման, ինչպես նաև

գնի և ծավալների շուրջ հստակ պայմանավորվածության ձեռքբերան հետ՝ նվազեցնելով գնային և իրացման ռիսկերը:

7. Նպաստել լիզինգի զարգացմանը, որը հնարավորություն կընձեռի գյուղացիական տնտեսություններին ձեռքբերել գյուղատնտեսական տեխնիկա իրականացնելով պարբերական վճարումներ երկարաժամկետ ժամանակահատվածում: Աջակցել նաև գյուղացիական տնտեսություններին այս ծառայություններից օգտվելու համար՝ տոկոսադրույքների սուբսիդավորման և այլ միջոցներով:
8. Գյուղացիական տնտեսությունների պարագայում, որոնց եկամտի աղբյուրը ՀՀ դրամով է բացառել կամ սահմանափակել արտարժույթով վարկերի տրամադրումը՝ զերծ պահելու տնտեսություններին արտարժույթային ռիսկից:
9. Նախադրյալներ ստեղծել արժեթղթերի շուկայի միջոցով՝ արժեթղթերի թողարկմամբ դեպի գյուղատնտեսություն ֆինանսական միջոցների ներգրավման համար, որն ունի մի շարք առավելություններ, այն է՝ գրավային պահանջների բացակայությունը, երկարաժամկետ միջոցների ներգրավման հնարավորությունը, տոկոսադրույքների ավելի ցածր մակարդակը: Թողարկվող արժեթղթերի ներդրումային գրավչության բարձրացման համար կիրառել պետական երաշխիքների տրամադրումը, որը լրացուցիչ ապահովության միջոց կհանդիսանա ներդրողների համար և կբարձրացնի թողարկվող արժեթղթերի իրացվելիությունը:
10. Ապահովել պետական երաշխիքների օգտագործումը՝ ֆինանսական կազմակերպությունների միջոցները գյուղատնտեսության ոլորտ ուղղորդելու համար, ինչպես նաև ապրանքներ արտադրողների, վերամշակող և արտահանող կազմակերպությունների միջև կայուն և երկարաժամկետ հարաբերություններ հաստատելու համար:
11. Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ, որը կխթանի վարկավորման ծավալների ավելացմանը և վարկավորման պայմանների՝ տոկոսադրույքի, ժամկետի, ապահովածության բարելավմանը: Պետական աջակցությունը համակարգի

ներդրման և գործունեության ապահովման համար, մասնավորապես, պետք է ներառի հետևյալը.

- Համապատասխան իրավական դաշտի ձևավորումը, որը կնպաստի գյուղատնտեսական ապահովագրական պրոդուկտների մշակումը և ներդրումը,
- Տեխնիկական աջակցությունը ինդեքսային համապատասխան պրոդուկտների (եղանակային, տարածքային բերքատվության և գնային ինդեքսներով (Index-based insurance) պայմանավորված) մշակման և թեստավորման գործում,
- Աջակցությունը տվյալների բազաների ստեղծման և պարբերական թարմացման գործում՝ ռիսկերի լավագույնս կառավարման համար,
- Գյուղացիական տնտեսություններին ապահովագրական պրոդուկտների, դրանց առանձնահատկությունների և առավելությունների լուսաբանումը:

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանման մասով.

1. Ապահովել հարկային և մաքսային արտոնությունների տրամադրումը արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին, ինչպես նաև տեղական արտադրողների պաշտպանությունը մաքսատուրքերի միջոցով:
2. Պետությունը ակտիվ դերամասնակցություն պետք է ունենա գյուղատնտեսական ապրանքների արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունների ստեղծման և դրանց զարգացման գործում: Բարենպաստ պայմաններ պետք է ստեղծվեն նման բիզնեսով զբաղվելու և այս ոլորտում գործող կազմակերպությունների քանակի ավելացման և ազատ մրցակցության համար: Պետական աջակցությունն այս ուղղությամբ, ի լրումն հարկային և մաքսային արտոնություններից և վարչարարության կրճատումից, պետք է ներառի, մասնավորապես.
 - Աջակցությունը արտահանման ձեռնարկությունների հիմնման գործում, այդ թվում՝ նպատակային ֆինանսավորում, մասնակցություն հիմնադրվող ձեռնարկության կապիտալում,

- Աջակցություն օտարերկրյա իրացման շուկաների բացահայտման և ապրանքների արտահանման կազմակերպման գործում և այլն:
3. Արտահանմամբ զբաղվող ձեռնարկությունները պետք է գտնվեն պետական հսկողության տակ՝ չարաշահումներից խուսափելու համար: Նշվածը հատկապես արդիական է մոնոպոլ դիրքեր ունեցող ընկերությունների դեպքում, որոնք գերշահույթ հետապնդելով կարող են նպաստել գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալների կրճատմանը՝ ապրանքների ձեռքբերման գների նվազեցման շնորհիվ:
 4. Արտահանման խթանման գործուն քայլերի ձեռնարկման շնորհիվ Հայաստանը պետք է ձգտի լիարժեքորեն օգտվել ինչպես Մաքսային միության, այնպես էլ՝ ԱՀԿ-ի Ազգերի առավել բարենպաստ ռեժիմի ընձեռած հնարավորություններից:
 5. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի այն ապրանքատեսակներին, որոնց գծով Հայաստանն ունի մրցակցային առավելություններ: Ընդ որում, արտահանման խթանման պետական աջակցության ռազմավարությունը պետք է իրականացվի ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքների գծով, այլ նաև՝ դրանց վերամշակումից ստացվող ապրանքատեսակների մասով:
 6. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական ապրանքների իրացման շուկաների դիվերսիֆիկացման համար՝ ապահովելու պահանջարկի կայունություն և անընդհատ աճ՝ անկախ միջազգային տարբեր շուկաներում պահանջարկի և գների բացասական տատանումներից:
 7. Արտահանման պրոցեսի հետ կապված տրանզակցիոն ծախսերը պետք է գտնվեն անընդհատ հսկողության տակ և միջոցներ պետք է ձեռնարկվեն դրանց նվազեցման և գործընթացի արագացման ուղղությամբ: